

ԱՇԽԱՏԱԳՈՒՄԻ ԱԿՏ

**ՀԱՄԱՐԳՆԱԿԱՆ
ԻՍՏԱՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ԱՆԳԼԵՐԵՆ – ՀԱՅԵՐԵՆ)**

Ե Ր Ե Վ Ա Ն – 2 0 1 2

«Չանգակ» հրատարակչություն

AELITA DOLUKHANYAN

UNIVERSAL PROVERBS

(ENGLISH – ARMENIAN)

YEREVAN – 2012

“Zangak”

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ
Խ. ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Դոկտիսանյան Աելիտա

ՀԱՄԸՆԴՂԱՆՈՒՐ ԻՍԱՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ /Ա. Դոկտիսանյան: Եր.:
«Չանգակ» հրատ., 2012/:

Գրքում ներկայացված է համամարդկային այն իմաստախոսությունների մի մասը, որոնք համընդհանուր տարածում ունեն քաղմաթիվ քաղաքակիրթ ժողովուրդների մոտ: Օրինակներն անգլերեն են՝ հայերեն համարժեքներով: Բացատրություններում մեծ տեղ է տրված հայ գրականության նմուշներին:

Ուղղված է բոլոր նրանց, ում համար ուսանելի է մարդկության դարավոր կենսափորձը:

© Դոկտիսանյան Ա., 2012



Աելիտա Գուրգենի Դուլուխանյանը Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչն է, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 2012-ին արժանացել է Հայաստանի մշակույթի վաստակավոր գործչի կոչման: 26 գրքի և շուրջ 300 գիտական հոդվածների հեղինակ է: Նրա աշխատությունները լույս են տեսել ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, լեհերեն: Թարգմանություններ է կատարում ռուսերենից, անգլերենից, ֆրանսերենից: Ունի բազմաթիվ պարգևներ, այդ թվում՝ Մովսես Խորենացու մեդալ (2003): «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ» գրքի համար արժանացել է Հայաստանի գրողների միության «Նիկոլ Աղբալյան» մրցանակին (2008): Հիմնել է «Եվրոպացի հայագետներ» մատենաշարը:

Professor Aelita Dolukhanyan holds a post-doctoral degree in philology, and is a Correspondent Member of the Armenian National Academy of Sciences. She is the Chair of the Department of Armenian Literature and Its Teaching Methodology at the Khachatur Abovian State Pedagogical University in Yerevan, Armenia. On 23 May 2012 President of the Republic of Armenia bestowed on Prof. Dolukhanyan the honorary designation of Outstanding Contributor to Culture and Arts of the Republic of Armenia. Prof. Dolukhanyan has written 26 books and nearly 300 scholarly research articles.

In addition to Armenian, her work has been published in Russian, English, French, and Polish languages. She has also translated numerous research and literary pieces into Armenian from Russian, English, and French. Prof. Dolukhanyan has received many awards, including the Movses Khorenatsi Medal in recognition of her contributions to literary studies (2003). Her book "Frederic Feydit: an Armenologist" received the Nicol Aghbalian prize awarded by the Union of Writers of Armenia (2008). She has founded the "European Armenologists" literary series of books.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մանուկ հասակից մարդը շարունակ լսում է առած-ասացվածքներ, սկզբում դրանք չհասկանալով, հետո առավել հասուն տարիքում հասկանալով ու յուրացնելով, ինքն է սկսում դրանք օգտագործել, երբեք չմտածելով, թե երբ և ում կողմից են առաջացել այդ իմաստախոսությունները:

Ամեն ազգ ունի իր իմաստախոսությունները, որոնք ծնվել են տվյալ ազգի դարավոր կենսափորձի հիման վրա, սակայն ամեն ազգի իմաստախոսություններում առկա են այնպիսիք, որոնք հանրնդհանուր են և առաջացել են մշակութային ու անմիջական միջազգային դարավոր շփումների հետևանքով: Կան նաև այնպիսի իմաստախոսություններ, որոնք նույնությամբ ձևավորվել են տարբեր ազգերի մոտ՝ ելնելով մարդու նույնական էությունից: Չէ որ բոլոր ազգերի մարդկանց մոտ կան հավատարմություն-դավաճանություն, ազնվություն-խաբեություն, մեծահոգություն-ստորություն, աշխատասիրություն-ծուլություն, ազահություն-չափավորություն, շիտակություն-խորամանկություն, բարություն-չարություն, մեծամտություն-համեստություն և բնավորության նման գծերի հակակշիռները:

Մարդու էության ահա այս գծերն էլ ծնել են նմանօրինակ առած-ասացվածքներ տարբեր ժողովուրդների մոտ:

Միշտ չէ, որ մարդն օգտագործելով իմաստախոսությունը հասկանում է նրա իսկական իմաստը, առավել ևս ծագումը:

Համընդհանուր և համամարդկային այն իմաստախոսությունները, որոնք զետեղված են այս գրքի մեջ, ունեն մեծ մասամբ հնագույն ծագում և գործածվում են քրիստոնյա ժողովուրդների մոտ՝ կապեր ունենալով Հին ու Նոր Կտակարանների հետ:

Կան նաև ավելի նոր ժամանակներում առաջացած իմաստախոսություններ, որոնց տրված բացատրություններում նշվում է, թե ով է դրանց հեղինակը:

Իմաստախոսությունները բերվում են անգլերենով և դրանց հայերեն համարժեքներով այն պարզ ու գործնական նկատառումով, որ անգլերենն այժմ միջազգային լեզվի դեր է կատարում: Անգլերեն ու հայերեն իմաստախոսություններին զուգահեռ երբեմն բերվում են նաև դրանց ռուսերեն ու ֆրանսերեն տարբերակները:

Իմաստախոսությունների բացատրություններում զգալի օրինակներ քաղված են հայ գրողների երկերից:

Աելիտա Դոլուխանյան

FOREWORD

Since childhood, people constantly hear proverbs and sayings which become a core part of one's vocabulary. Often, people repeat the proverbs and sayings almost by rote. People usually dwell more on the meanings of the proverbs and saying more and gain a clearer understanding of their meaning when they grow older. Generally, though, most people will go on using the proverbs and saying without thinking too much about their origins, coinage, or sources.

Every culture has its own treasure trove of wise sayings that have evolved as a result of its centuries-long history and experience. Nevertheless, among words of wisdom of every culture there are ones which are common to many other cultures as well, and they are all usually rooted in literary traditions or centuries-long cross-cultural contacts and influences. There are also instances of commonly shared proverbs and sayings that have simultaneously evolved among diverse peoples and cultures, due to similarities of human nature and experience. As humans, no matter what our ethnic and cultural origin is, we share emotions and values that are universally praised, accepted, or abhorred. Sometimes those values appear in characteristic juxtapositions, such as good vs. evil, or faithfulness vs. betrayal, honesty vs.

deception, generosity vs. stinginess, perseverance vs. apathy, greed vs. benevolence, hard work vs. laziness, and this list can go on and on. It is these human characteristics that feed and nurture the wisdom behind proverbs and sayings among many cultures.

The proverbs and sayings that are covered in this book are words of wisdom common to all human beings. They are mostly of ancient origin and are common to the Judeo-Christian tradition, as they originated in the Old and New Testaments. This book also covers proverbs and saying that have appeared more recently, and references are made to their origins and authors accordingly.

This book lists proverbs and sayings in English – which has become the international language of communication – with their corresponding Armenian equivalents. Sometimes Russian and French versions of these proverbs and sayings are listed, especially in instances when they validate patterns of usage, showcasing cross-cultural commonalities of worldviews and influences. In many instances, the explanations of origins of these proverbs and sayings reference diverse works by Armenian writers. This book gives us an opportunity to gain greater insight into the wisdom of generations that have preceded us.

Aelita Dolukhanian

ՆԱԽԱԲԱՆ

*Ամեն ինչ պետք է անել հնարավորինս
պարզ, բայց ոչ պարզունակ:
Ա.Էյնշտեյն*

*Everything should be made as simple
as possible but not simpler.
A.Einstein*

Մարդկային իմաստախոսությունները, որոնք հաճախ հանդես են գալիս առած-ասացվածքների ձևով, ունեն շատ հին ծագում և հետևանք են մարդկային հասարակության դարավոր կենսափորձի: Աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ունեցել են և ունեն իրենց առած-ասացվածքները, որոնք մի սերնդից փոխանցվել են մյուսին ու հարատևել են դարեդար: Հայ իրականության մեջ առած-ասացվածքների նկատմամբ ուշադրության առաջին դրսևորումները հանդիպում ենք ոսկեդարի մատենագրության մեջ: Դրանց փայլուն դրսևորումները տեսնում ենք հենց Եզնիկ Կողբացու խրատներում, որոնք շարադրված են քրիստոնեական մարդասիրության դիտակետից ու լայն աղերսների ունեն Աստվածաշնչի Հին ու Նոր կտակարանների հետ: Եզնիկը կարևորել է իր խրատների կիրառական նշանակությունն ու այն հղում է քրիստոնյա հավատացյալներին՝ նրանց աստվածային պատվիրանների սահմաններում պահելու հա-

մար: Եզնիկի խրատները հասարակական նշանակություն ունեն, որովհետև մարդը, և դա եղել է բոլոր երկրներում ու բոլոր դարերում, հակված է շեղվել աստվածային պատվիրաններից, որի հետևանքով էլ մարդկային հասարակության մեջ ավելանում է չարիքի չափաբաժինը:

Եզնիկ Կողբացու խրատներն առաջին հերթին ուղղված են հոգևորականներին՝ մարդկային հոգու կրթիչներին, որպեսզի վերջիններիս մոտ չառաջանա խոսքի ու գործի հակասություն.

«Մարմնասեր կրոնավորը նման է խոզի, ծովացած մեղքերից կխեղդվի»¹:

«Հավատակցին սիրող կրոնավորը համանման է Քրիստոսին»²:

«Մարմինդ նեղի՜ր գիտությամբ ու գրքի վկայությամբ»³:

«Եթե բոլոր կրոնակիցների հիվանդությունը քեզ ցավ չի պատճառում, մի՛ լինիր առաջնորդ»⁴:

Իրական կյանքի դժվարությունները հաղթահարելու բարությունը Եզնիկը համեմատում է պատերազմում հաղթելու հետ.

«Այս կյանքը պատերազմ է»⁵:

¹ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 183:

² Նույն տեղում, էջ 185:

³ Նույն տեղում, էջ 186:

⁴ Նույն տեղում, էջ 189:

Եզնիկի խրատներում կան իմաստուն խորհուրդներ, որոնք ուղղված են բոլոր մարդկանց և ունեն դաստիարակչական մեծ արժեք.

«Ով գարնանը հանգիստ է մնում, ձմռանը սովից ու սառնամանիքներից սատկում է»⁶:

«Եթե անարժանին ինչպես պետքն է չես կշտամբում, մի՛ լինիր ուսուցիչ»⁷:

Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» ոսկեղենիկ մատյանը լի է անտիկ ու քրիստոնեական իմաստախոսություններով, որոնցից գոնե երեքը գիտի ամեն մի կրթված հայ.

«Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը»⁸:

«Ինչպես որ հնում մեկն ասել է՝ չհասկացված մահը մահ է, հասկացված մահը՝ անմահություն: Ով որ չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից, իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում»:

⁵ Նույն տեղում, էջ 187:

⁶ Նույն տեղում, էջ 183:

⁷ Նույն տեղում, էջ 189:

⁸ *Եղիշե*, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 9:

«Լավ է աչքով կույր [լինել], քան մտքով կույր: Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմինների տեսողությունից»⁹:

Այս իմաստախոսությունները եղիշեն քաղել է անտիկ մտածողների մտքի գանձարանից և ուղղել է իր քրիստոնյա հայրենակիցներին, որոնք դեռևս Ավարայրի հերոսամարտի ու ազգային-ազատագրական պատերազմի հետևանքով ստացած մարդկային կորուստների պատճառած անսփոփ վշտի մեջ էին, և պատմիչն իր ազգակիցներին յուրօրինակ ձևով խրախույս էր կարդում՝ լինել միաբան, եթե պետք է զոհվել հանուն հայրենիքի ու անմահանալ: Այդ մտքերը իրենից առաջ արդեն ասվել էին և նրանց հիշեցումը հայ պատմիչը մշտական ուղեկից էր դարձնում իր ազգին:

Բոլորովին այլ նպատակով է օգտագործել ժողովրդական ու ավետարանական առած-ասացվածքները ոսկեդարի վերջին պատմիչը՝ Ղազար Փարպեցին, իր հռչակավոր «Թղթում», որը Միքայել Նալբանդյանը թարգմանել է աշխարհաբարի 1864-1865 թթ. ընթացքում՝ Պետրոպավլովյան բերդում բանտարկված ժամանակ: Առանց վախենալու եվրոպական գիտության քննադատությունից՝ Նալբանդյանը Ղ.Փարպեցուն համեմատում է լատին նշանավոր պատմիչ Տակիտոսի (50-120) հետ. «Արդարև, Փարպեցու պատմությունը շատ տեղ և մեծ մասով նմանություն ունի Տակիդոսի հոյակապ տարեգրությանց, թե իր անախտակիր ոգու և ճարտարության մասին: Եվ մեզ թվում է, թե այս համեմատությունը էր ամենամեծ գովասանությունը, որ

⁹ Նույն տեղում, էջ 29:

կարող էինք տալ Փարպեցու Պատմության, առանց վախենալու եվրոպական գիտության դատաստանից»¹⁰:

Միքայել Նալբանդյանին հատկապես հիացրել է Ղազար Փարպեցու «Թղթի» քննադատական ոգին, որն ուղղված էր տգետ արեղաներին, ովքեր նրան հանիրավի հալածել էին: Իր տգետ հակառակորդներին մերկացնելու համար ոսկեդարի պատմիչը լայնորեն օգտագործել է քրիստոնեական սրբազան մատյանների մտքերը, նաև երկու ժողովրդականած առածներ՝

1) *«Ըստ խոզի հարսնացելոյ՝ կոյաջուր բաղանիք»*
(*«Հարսնացած խոզի համար կոյաջուրը բաղանիք է»*):

2) *«...և ոչ դարձեալ իբրև զլցեալսն պիղծ և վատթար գործովք, որոց չհայեցեալ յիւրեանց գերանն՝ յայլոց մատուցեալ յակնն՝ զննեն հանել շիւղ»*¹¹: (*«Եվ դարձյալ չի կարելի մնանվել պիղծ ու վատթար գործերով լցված մարդկանց, որոնք իրենց աչքի գերանը չտեսնելով, ուրիշի աչքն են զննում, որ շյուղ հանեն»*):

Բագրատ Ուլուբաբյանի թարգմանության տողատակերում նշված են Փարպեցու «Թղթում» սուրբգրային հղումները, սակայն չի նշված, որ վերոբերյալ երկրորդ առածը նույնությամբ կա Մատթեոսի Ավետարանում. *«Ինչո՞ւ քո եղբոր աչքի շյուղը*

¹⁰ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 4, Երևան, 1983, էջ 334-335:

¹¹ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 464-465, 466-467:

տեսնում ես, իսկ քո աչքի մեջ գերանը չես տեսնում. կամ ինչպե՞ս քո եղբորն ասում ես՝ թող որ հանեն այդ շյուղը քո աչքից, և ահա քո աչքում գերան կա: Կեղծավոր՛ր, նախ հանի՛ր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես քո եղբոր աչքից շյուղը հանելու համար»¹²:

XIX դարի առաջին կեսին Խաչատուր Աբովյանը դառնում է հայ առաջին գրող-բանագետը, որը ոչ միայն իր «Վերք Յայաստանի» վեպում, «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուում, «Բայաթներում» ու այլ գործերում լայնորեն օգտագործում է ժողովրդական իմաստախոսությունները, այլև բարեխղճորեն հավաքում է բանահյուսական տարբեր նյութեր, ոչ միայն հայերից, այլև քրդերից ու եզդիներից:

Աբովյանը «Վերք Յայաստանի» հանճարեղ վեպի առաջաբանում նկատում է, թե հայերը առակ, զրույց, սրամիտ խոսքեր շատ ունեին, նույնիսկ հետին ռամիկը մեկի փոխարեն հազարը կասի, սակայն այդ մասին ուրիշ ազգերը չգիտեն, մինչդեռ դրա կարիքը պիտի որ ունենան ուրիշ ժողովուրդները: Եվ նա իր գլուխգործոցը զարդարում է բազմաթիվ իմաստախոսություններով, որոնց մեծ մասը ազգային կենսափորձի գոհարներ են: Ահա դրանցից մի քանիսը՝

«Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ լինի»:

«Մարդ ինչ անի, այն իր առջև կգա: Լավություն անես, լավություն կտեսնես, վատություն անես, վատություն»:

¹² Մատթեոս, Է, 3-5:

«Ի՞նչ պետք է տանենք այս փուլչ աշխարհից, դատարկ եկել ենք, դատարկ կգնանք»:

«Դեղ ունես քո գլխին արա, յուղ ունես, ձեր կճուճում պահիր»:

«Ուրագն իր կողմն է տաշում, ծառն իր տակ ստվեր զգում»:

«Մկան բույնը որ հազար թուման տվել էին, կառներ, մեջը կմտներ»:

«Խնորն առանց թթխմորի չի ուռչի»:

«Զօգտագործված թուրը կժանգոտի»:

«Ցուրտը տարած տեղը կրակին դեմ չեն անի»:

«Ամեն բան իր գինն ունի, շաքարեղենը քաղցր է, բայց հացի տեղը չի բռնի»:

«Զվարած հողը թե ցանեցիր, թռչունները կուտեն սերմը»¹³:

Վերջին ասացվածքը հիշեցնում է Մատթեոսի Ավետարանի «Սերմնացանի առակը». «Ահա մի սերմնացան ելավ սերմանելու, և երբ նա սերմանում էր, մի մաս սերմ ընկավ ճանապարհի եզերքին, և երկնքի թռչունը եկավ և այն կերավ: Եվ ուրիշ մի մաս ընկավ ապառաժի վրա, ուր շատ հող չկար և խկույն բուսավ, քանի որ հողը խորութթուն չուներ, երբ արևը ծագեց, խանձվեց և քանի որ արմատներ չկային, չորացավ: Եվ ուրիշ մի մաս ընկավ փշերի մեջ, ու փշերը բարձրացան և այն խեղդեցին: Եվ մեկ ուրիշ մաս ընկավ պարարտ հողի վրա և

¹³ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից քաղած առած-ասացվածքները փոխադրել ենք արդի հայերենի:

պտտուղ տվեց. կար որ մեկին՝ հարյուր, և կար որ մեկին՝ վաթսուհ, և կար որ մեկին՝ երեսուհ: Ով չսեչու ականջ ունի, թող լսի»¹⁴:

1906-ին վաստակաշատ բանահավաք Սարգիս Չայկունին «Էմինյան ազգագրական ժողովածուում» հրատարակում է հայ ժողովրդական առած-ասացվածքները՝ բոլորը ներկայացնելով նույն խորագրով՝ «Առած»¹⁵: Իր հրապարակումը Ս.Չայկունին կոչել է «Մեծանաց խոսքեր»՝ նախահարց իմաստով: Նա առածները հայ ազգի ամենօրյա կյանքում ունեցած դերի համար անվանում է ժողովրդի նվիրական դարձվածներ, որոնցով հայերը, և ոչ միայն հայերը, առավել դիպուկ են դարձրել իրենց խոսքը՝ հենվելով մարդկության դարավոր փորձի իմաստության վրա: Չայկունին գրառել է առածներ տարբեր բարբառներով և բոլորի համար ունի հետևյալ ուշագրավ նկատումը. «Եթե բաղդատության դնենք հայ առածները քրդերեն առածներու հետ, քիչ տարբերություն կգտնենք, իսկ թուրք պարսիկներու հետ չէ կարելի համեմատել. նոցա առածները բոլորովին անբարոյական խոսքերով կասվեն, քիչ բացառությամբ»¹⁶: Այս դիտարկման մեջ կարևորն այն է, որ հայերը դարավոր հետևողականությամբ բարեկրթության և քրիստոնեական բարոյախոսության կրողներն են եղել, հենց դրա համար էլ Հին ու Նոր կտակարանների առած-ասացվածքները, որոնց մի

¹⁴ Մատթեոս, ԺԳ, 4-9:

¹⁵ Էմինեան ազգագրական ժողովածու, հ. 2, ժողովրդական երգ, առած, ասած, հանելուկ, երգում, օրհնանք, անեծք և այլն, հավաքեց Ս.Չայկունի, Մոսկվա-Վաղարշապատ, 1906, էջ 165-294:

¹⁶ Նույն տեղում, էջ 165:

մասն անշուշտ արդեն ունեին իրենց գիտելիքների պաշարում՝ որպես դարավոր փորձի դրսևորում, այդքան սիրված ու ելակետային են դառնում հայի բանավոր խոսքում և մատենագրության մեջ: Ի դեպ, երբեք չհայիոյելու ավետարանական պատգամը իր խրատական տաղերում հայ մարդուն հղում է XVII-ի դարավերջի և XVIII-ի դարասկզբի կենսասեր բանաստեղծ Նաղաշ Յովնաթանը.

*Դու մի՛ սիրեր սուտն, քուֆրն ու բոհտանն (հայիոյանքն
ու գրպարտությունը),
Դրուստ (ճշմարիտ) արա աղքատի դատաստանն,
Մեղայ տուր, աղօթե Աստծու տանն,
Կու լսես հրեշտակաց սագերն ու տաղն¹⁷:*

Սատթեսուի Ավետարանում կարդում ենք. «Մի՛ տվեք սրբությունը շներին և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք, որպեսզի դրանք ուտքի կոխան չանեն և դառնալով ձեզ չպատառոտեն»¹⁸:

Հանճարեղ Սայաթ-Նովան, որը հաճախ էր օգտվում քրիստոնեական սրբազան մատյաններից, իր խաղերից մեկում գրեթե նույնությամբ կրկնում է այս միտքը.

*Թեզուզ իմանաս, գիդենաս աստղերու համբարքը
սիրուն,*

¹⁷ Նաղաշ Յովնաթան, Տաղեր, Երևան, 1983, էջ 166:

¹⁸ Սատթեսու, Է, 6, 7:

*Անբարի գուրծըն կորած է՝ կարթա Չարանց վարքըն
սիրուն.*

*Ավիտարանի խոսկիրըն մարքարիտ է, կարքըն՝ սիրուն.
Մի՛ ածի խուզի առչիվըն լալ ու գովհար, Սայաթ-Նովա¹⁹:*

Ավետարանական և ընդհանրապես աստվածաշնչային իմաստախոսությունները մարդկային կյանքը գնահատելու ելակետեր են եղել հայ միջնադարյան գրականության պաշտոնական թևը ներկայացնող մատենագիրների համար: Գրիգոր Նարեկացին «Վասն թոնրակեանց» թղթում, որն իր ժամանակի համար ներքաղաքական ու համաքրիստոնեական բացառիկ արժեք ուներ, զգուշացնում է հայ ժողովրդի տարբեր խավերին՝ չտարվել թոնդրակեցիների գայթակղիչ աղանդով և հիշեցնում է Մատթեոսի ու Մարկոսի Ավետարանների համապատասխան հատվածները, ուր ասվում է.

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

«Յարիցեն սուտ քրիստոսք եւ սուտ մարգարէք»²⁰:

ՄԱՏԹԵՈՍ

¹⁹ *Սայաթ-Նովա*, Չայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Չասրաթյան, Երևան, 1963, էջ 53:

²⁰ Մատենագիրք հայոց, ԺԲ հ., Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Երևան, 2011, էջ 1088:

«Այն ժամանակ, եթե մեկը ձեզ ասի՝ ահա, Քրիստոսը այստեղ է կամ այնտեղ, չհավատաք նրան, որովհետև սուտ քրիստոսներ և սուտ մարգարեներ պիտի ելնեն և մեծամեծ նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցույց տան՝ ընտրյալներին անգամ մոլորեցնելու աստիճան, եթե հնար չի՞նի»²¹ :

ՄԱՐԿՈՍ

«Այն ժամանակ, եթե մեկը ձեզ ասի, թե՛ ահա՛ այստեղ է Քրիստոսը կամ այնտեղ, չհավատաք, որովհետև սուտ քրիստոսներ և սուտ մարգարեներ պիտի ելնեն և նշաններ ու զարմանալի գործեր պիտի ցույց տան՝ մոլորեցնելու նպատակով, եթե հնար չի՞նի, նույնիսկ ընտրյալներին»²² :

Նույն իմաստախոսությունն է կրկնում Արիստակես Լաստիվերցին իր պատմության ԻԲ գլխում, որը կոչվում է «Թոնդրակեցիների չար աղանդի մասին, որը երևաց Յարք գավառում և մոլորեցրեց շատերին»։ «Նույնիսկ մեր տերն է, նրանց նկատի ունենալով, իր կենարար ավետարանության մեջ պատվիրում. **«Ձզույշ եղեք այն սուտ մարգարեներից, որոնք ձեզ մոտ են գալիս գառների հանդերձներով, մինչդեռ հափշտակող գայլեր են»²³ :**

²¹ Մատթեոս, ԻԴ, 23-27:

²² Մարկոս, ԺԳ, 21-23:

²³ *Արիստակես Լաստիվերցի*, Պատմություն, Թարգմանությունը, Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971, էջ 87:

Ավետարանի «Աստված և մամոնա» հատվածում կարդում ենք. *«Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կամ մեկին կատի և մյուսին կսիրի, կամ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի. չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային»*: Այս իմաստախոսության համարժեքները գտնում ենք հայ միջնադարյան քնարերգուների մոտ:

Անշուշտ Աստվածաշնչի «Ծննդոց» գրքից է մեր «Առածանին» մտել «Արգելված պտուղը քաղցր է» առածը, որն առկա է քրիստոնյա բոլոր ժողովուրդների բանահյուսական գանձարանում: Ահա այն. Եվան դրախտում քաղում և ուտում է արգելված պտուղը, դեռ Ադամին էլ դրդում է նույնը անելու. այդ արարքի հետևանքը մարդկության դրախտից վտարվելն է և չարն ու բարին ճանաչելը: Սա մի պրոբլեմ է, որ աշխարհի քրիստոնեական գրականության ու արվեստի մեջ ունեցել է երկարատև գոյատևելու ճանապարհ՝ ամենատարբեր դրսևորումներով: Հայ միջնադարում «Ծննդոց գրքի» այդ հատվածն է ընկած XV դարի նշանավոր բանաստեղծ Առաքել Սյունեցու «Ադամագրքի» հիմքում, որն աչքի է ընկնում Աստծու, Ադամի ու Եվայի հետաքրքիր երկխոսություններով:

Սատթեսի Ավետարանի «Կայսրին տրվելիք տուրքը» բաժնում կարդում ենք. *«Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է»*: Նրանք ասացին՝ կայսրինը: Այն ժամանակ նրանց ասաց. *«Գնացե՛ք, տվե՛ք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն: Երբ այս լսեցին, զարմացան և թողեցին նրան ու գնացին»*²⁴: Այս ասացվածքը այնքան արքսիոմատիկ է դարձել հայկական ժողովրդա-

²⁴ Մատթեոս, ԻԲ, 21-22:

կան մտածողության համար, որ մտել է «Առածանու» մեջ.
«Վերն Աստված, վարը թագավորը»²⁵:

Ավետարանական վարդապետությունը և՛ հայ պաշտոնական, և՛ աշխարհիկ գրականության համար դարձել էր էություն.
«Եվ թե մեկը կամենա քեզ բռնադատել և քո շապիկն առնել, նրան քո բաճկոնն էլ թող: Եվ եթե մեկը քեզ հարկադրի մի մղոն ճանապարհ անցնել, նրա հետ երկու էլ գնա»²⁶: Այս քարոզը տեսնում ենք նաև Սայաթ-Նովայի մոտ.

Ով քիզ լեղի պարքիվե, դուն տու շաքար, Սայաթ-Նովա²⁷:

Հայ միջնադարի և քրիստոնեական սրբազան մատյանների աղբյուները բազմաթիվ են ու տևական: Սա բնական է. ողջ հայ միջնադարը ներծծված էր քրիստոնեական գաղափարներով, և հայ գրականությունն իր հիմքում ուներ քրիստոնեական նույն մարդասիրությունը, ինչը այն ուսուցանող սրբազան գրքերը:

Հայ միջնադարը երբեք չկտրվեց անտիկ իմաստուններից և հելլենական գրականության մեծերի մտածողությունից: Անտիկ աշխարհի գանձերից են Եզոպոսի առակները, որոնք հիմք դարձան առակների խտացումը բանաձևող առած-ասացվածքների համար և մտան հայ ժողովրդական խոսքի մեջ ու դեռ գործածական են մեր օրերում:

²⁵ Ա. Ղանալանյան, Հայկական առածանի, Երևան, 1951, էջ 27:

²⁶ Մատթեոս, Ե, 40-41:

²⁷ Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն..., էջ 53:

«Աղվեսի դունչը խաղողին չհասավ, խակ է ասավ» առածն առաջացել է Եզոպոսի «Աղվեսն ու խաղողը» առակից: Աղվեսը մտնում է խաղողի այգին ու ցատկելով ցանկանում է հասնել հյուսիս ողկույզներին, սակայն նրան դա չի հաջողվում ու իրեն սփոփում է ասելով, թե խաղողը խակ է²⁸:

„Крылатые слова“ ժողովածուում „Зелен виноград“ ասույթը կապվում է Ի.Կռիլովի „Лисица и виноград“ առակի հետ և անտեսվում է նրա Եզոպոսյան ծագումը²⁹: Կռիլովը անշուշտ առակը քաղել է Լաֆոնտենից, վերջինս էլ Եզոպոսից:

Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններից է գալիս նաև «Ծառը պտղից է ճանաչվում» իմաստախոսությունը, որը տարբեր ձևակերպումներով առկա է հայ բանահյուսության մեջ:

Հայ ժողովրդական առած-ասացվածքների գիտական համահավաք բնագիրը խորիմաստ ներածականով, առաջաբանով ու թեմատիկ ցանկով հրատարակել է հայ բանագիտության մեծ երախտավոր Արամ Ղանալանյանը: Անշուշտ նրա «Առածանու» բովանդակության մեջ կան այնպիսի իմաստախոսություններ, որոնք զուտ հայկական են ու չեն կարող լինել այլ ժողովուրդների մոտ, սակայն բավական թիվ են կազմում նաև այնպիսիք, որոնք առկա են նաև այլ ժողովուրդների մոտ:

Եթե հարցնենք որոշ մարդկանց, նույնիսկ կրթված, թե ինչու են որևէ մեկի մասին ասում՝ «Գլխին մածուն է մերած» և ինչպես է այդ առածն առաջացել, նա կդժվարանա պատասխանել: Սա զուտ հայկական առած է: Մածունը մերելիս մոտ 10 ժամ այն ամանը, որի մեջ մերել են տաքացած կաթը և ծածկել

²⁸ Aesop's Fables, Selected and Adapted by Jack Zipes, London, 1992, p. 15.

²⁹ Н. С. Ашукин, М. Г. Ашукина, Крылатые слова, М., 1987, с. 130.

շորով, չի կարելի շարժել: «Գլխին մածուն է մերած» առածը նշանակում է շշմած, ոչ շրջահայաց մարդ: «Գյուղը, որ կանգնի, գերանը կկոտրի»: Այս առածի իմաստը՝ միասնությունը ուժ է իրողությունն է: Սակայն առածը սկզբում ունեցել է զգուշացնող իմաստ: Հայաստանը լեռնային երկիր է, որոշ գյուղեր ծվարել են լեռան լանջերին և երբեմն մեկի տան կտուրը եղել է մեկ ուրիշ տան բակը: Եթե այդ տան կտուրին շատ մարդ կանգներ, ասենք, հարսանիք դիտելու համար, տանիքի գերանները կկոտրվեին, այստեղից էլ՝ «Գյուղը, որ կանգնի, գերանը կկոտրի»:

Առած-ասացվածքները գրականության այն տեսակն են, որոնք ունեն լայն կիրառություն և մեծապես օգնում են մարդուն թե՛ սովորական կենցաղային, թե՛ հռետորական խոսքում: Պատահական չէ, որ հայ գրողներն առ այսօր հետևելով Խաչատուր Աբովյանին, իրենց գրական երկերը համեմուն են դիպուկ առած-ասացվածքներով:

ԻՄԱՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

After a storm comes a calm.

Փոթորկից հետո հանգիստ կլինի:

Այս իմաստախոսությունը լավատեսորեն հավաստում է, թե չպետք է ընկճվել դժվարություններից, հարկավոր է դիմանալ և հասնել խաղաղ օրերի: Ոչինչ տևական չէ, կարևորը համբերությունն է: Հայկականը՝ «Ուրբաթ ամպեց, շաբաթ պարզեց», «Չի եղել գիշեր, որ չլուսանա»:

All are not thieves that dogs bark at.

Բոլորը գող չեն, որոնց վրա շները հաչում են:

Սա կարելի է հասկանալ և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստով: Ուղիղ՝ մարդուց ստացած առաջին տպավորությունը կարող է խաբուսիկ լինել: Փոխաբերական՝ մարդու մասին կարող են չարախոսել և դրան չի կարելի հավատալ: «Մարդու մասին չի կարելի դատել առաջին հայացքից: Արժանիքները սովորաբար պատված են համեստության քողով, թերությունները քողարկված են կեղծավորության դիմակով», - նկատել է ֆրանսիացի նշանավոր մտածող Ժ. Լաբրյուերը (1645-1696):

All cats are grey in the dark.

Բոլոր կատուները մթության մեջ սև են:

Սա նշանակում է՝ գեղեցկությունը մթության մեջ չի երևում: Մթության մեջ բոլորը դառնում են նույն կերպ: Լոնդոնի ամենաթանկ ռեստորանում լուսավորությունը հատուկ ձևով շատ նրբակերտ մթնաշաղային է, որ կանայք երիտասարդ երևան: Պլուտարքոսը գրում է. *«Երբ մոմերը հանգում են, բոլոր կանայք գեղեցիկ են»:*

All good things come to an end.

Ամեն լավ բան վերջ ունի:

Հաճույքը մշտական չէ, որովհետև ամեն ինչ շարունակ փոփոխվում է:

All's well that ends well.

Ամեն ինչ լավ է, երբ լավ է վերջանում:

Այս իմաստախոսությունը Շեքսպիրի կոմեդիաներից մեկի վերնագիրն է: Ասացվածքը շատ տարածված է նաև մերօրվա հայկական խոսքային շտեմարանում և հաճախ է գործածվում՝ նշանակելով. «Ասա վերջը լավ լինի»:

All roads lead to Rome.

Բոլոր ճանապարհները տանում են Հռոմ:

Այս իմաստախոսության փոխաբերական իմաստն այն է, որ բոլոր գիտնականներն իրենց հետազոտության արդյունքում կարող են հանգել նույն մտքին: Անշուշտ նախապես ձևակերպումն ունեցել է ուղղակի իմաստ, որովհետև հռոմեական

հզոր կայսրությունը կառուցել է մի ճանապարհ, որը, անցնելով կայսրությանը ենթակա երկրներով, հասնում էր Հռոմ: Այժմ Իտալիայում պահպանված է այդ հնագույն ճանապարհի մի մեծ հատված: Դրա մասին է վկայում նաև Վահան Թոթովենցի հիանալի վեպի խորագիրը՝ «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»:

All that glitters is not gold.

Ամեն փայլուն բան ոսկի չէ:

Արտաքին տեսքը հաճախ կարող է խաբուսիկ լինել: Սա հասկացվում է և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստով:

All things are difficult before they are easy.

Ամեն ինչ սկզբում դժվար է թվում մինչև հեշտ դառնալը:

Խոսքը փորձառության մասին է: Մեքենա վարելը, համակարգչից օգտվելը և նման հմտություններ ձեռք բերելը սկզբում շատ դժվար են թվում, սակայն վարժեցման ու փորձի շնորհիվ հեշտանում են, դառնում սովորական, և երբեմն էլ զարմանալի է թվում, թե դրանք սկզբում ինչու էին այնքան վախ պատճառում:

The apples on the other side of the wall are the sweetest.

Քո պատից այն կողմի խնձորը ամենաքաղցրն է թվում:

Երբեմն ուրիշի ունեցածը մարդու աչքին շատ ավելին է երևում, քան իրականում կա: Նույն միտքն են արտահայտում մեզանում տարածված «Չարևանի հարսը սիրուն է թվում», «Արգելված պտուղը քաղցր է», «Չարևանի հավը հարևանի աչքին չաղ կերևա», «Դրացու ապուրն անուշ կլինի»:

As you make your bed, so you must lie in it.

Քո պատրաստած անկողնում դու ինքդ պիտի պառկես:

Եթե անկողինդ վատ ես պատրաստել, ուրեմն գիշերը կքնես անհարմար և դրա համար ուրիշին մի մեղադրիր, այլ միայն քեզ: Նույն կերպ պատասխանատու ենք մեր արարքների հետևանքների համար, հետևաբար, պետք է հաշտվենք դրանց հետ: Չայկական իմաստախոսություններում կա նույնանման՝ «Ամեն մարդ իր վերմակի համեմատ պետք է ոտքերը մեկնի» ասացվածքը, ըստ որի՝ ուղղակի իմաստով, եթե վերմակդ կարճ է, ուրեմն ոտքերդ երկար մեկնել չես կարող: Փոխաբերական՝ ամեն ոք իր հնարավորությունների համեմատ պետք է ապրի:

A bad workman always blames his tools.

Վատ արհեստավորը միշտ իր գործիքների հետ հաշտ չի:

Խոսքը արհեստավորի և ընդհանրապես մարդու ապաշնորհության մասին է, որը չի տիրապետում իր գործին: Ռուսական ասացվածքի՝ „Дело мастера боится“ տարբերակն է:

Bad news travels fast.

Վատ լուրը շուտ է հասնում:

Մարդիկ սիրում են ուրիշների մասին ավելի շուտ վատը լսել, քան լավը: Լավ լուրը նրանք շուտ չեն փոխանցում, հաճախ նախանձից դրդված չեն էլ հայտնում ուրիշներին, իսկ վատն արագորեն փոխանցում են մեկը մյուսին:

Barking dogs seldom bite.

Չաչող շները հազվադեպ են կծում:

Համապատասխանում է հայկական «Չաչան շունը կծան չի լինում» ասացվածքին: Ուղիղ իմաստով նշանակում է, թե երբ շունը հաչում է, ապա դա բոլորովին էլ կծելու նպատակով չէ, այլ՝ զգուշացման: Փոխաբերական՝ երբեմն բացահայտ մարդուն վիրավորում են կամ ահաբեկում, դա ոչ միշտ կարելի է լուրջ ընդունել: Այդօրինակ մարդկանց պահվածքը հաճախ գործի չի վերածվում և մնում է միայն սպառնալիքների սահմաններում:

The beaten road is the safest.

Տրորված ճանապարհն ամենաապահովն է:

Պետք չէ ավելորդ ռիսկի դիմել: Անհրաժեշտ է օգտվել այլոց փորձից: Եթե ուրիշները փորձել են այդ ճանապարհը, և նրանով անցել են շատերը, այն անվտանգ է: Համապատասխանում է հայկական «Փորձված թանն անփորձ մածունից լավ է» ասույթին:

Beggars must not be choosers.

Սուրացիկներն ընտրություն չունեն:

Անձը, որը քաղցած է և դրան չունի ուտելիք գնելու, չի կարող մերժել այն ուտելիքը, որ իրեն տալիս են: Համապատասխանում է հայկական «Նվիրած ձիու ատամներին չեն նայում» կամ՝ «Ով վճարում է, նա էլ պատվիրում է մեղեդին» ասույթներին:

The best is often the enemy of the good.

Լավագույնը լավի թշնամին է:

Ուղիղ իմաստով՝ ամեն մի լավ կարող է ունենալ նաև իր կատարյալ տարբերակը: Փոխաբերական՝ երբեմն ձգտելով կատարյալին, կորցնում ենք այն, ինչ արդեն լավ էր և հասել էինք դրան:

Better an egg today than a hen tomorrow.

Լավ է ձու այսօր, քան հավ վաղը:

Սա նշանակում է՝ վաղվա օրն անհայտ է, հիմա ձուն կա, պետք է այն վերցնել: Նույն իմաստն ունի՝ «Լավ է մի թռչունը ձեռքիդ, քան երկուսը ճյուղի վրա»: Ասվում է նաև չազահանալու իմաստով:

Better late than never.

Լավ է ուշ, քան երբեք:

Լավ է որևէ գործ կատարել թեկուզև ուշացած, քան թե չանել: Մարդիկ երբեմն տված խոստումը կատարում են ուշացած և գործածում են այս ասացվածքը՝ այդ կերպ արդարացնելով իրենց ուշացնելը:

Better to ask the way than go astray.

Լավ է հարցնել ճանապարհը, քան մոլորվել:

Որոշ մարդիկ մեծամտաբար չեն հարցնում գիտականերից այն, ինչն իրենք չգիտեն և գնում են բոլորովին սխալ ճանապարհով: Ասացվածքը զգուշացնում է ավելորդ մեծամտությունից:

Between two stools you fall to the ground.

Երկու նստարանների միջև նստողը գետնին կընկնի:

Այս իմաստախոսությունն ունի մի քանի տարբերակներ. «Երկու նապաստակի հետևից ընկնողը ոչ մեկին չի բռնի», «Մի ձեռքով երկու ձմերուկ չես բռնի»: Մարդը չի կարող միաժամանակ երկու գործ անել, երկուսն էլ կտապալի: Ավետարանի «Աստված և մամոնա» հատվածում կարդում ենք. *«Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կամ մեկին կատի և մյուսին կսիրի, կամ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի. չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային»*: Այս իմաստախոսությանը հանդիպում ենք հայ միջնադարյան բանաստեղծների մոտ: Այսպես, Ֆրիկը գրում է.

*Երկու տէրանց ո՞վ ծառայել,
Հանց զոր երկուքն էր նա շահել,
Այդ խորհրդորդոյ մարդ չէ հասել,
Լ՛ Ոչ դու կարես զայդ գրտանել:*

Սայաթ-Նովան էլ համոզված է.

*Մե դուգունըն էրկու դադին ի՞նչ անե,
Մե նոքարըն էրկու ադին ի՞նչ անե,
Մե բաղմանչին էրկու բադին ի՞նչ անե...*

Books and friends should be few but good.

**Գրքերն ու ընկերները պետք է լինեն քիչ, բայց
լավը:**

Սարդիկ հաճախ ձևականորեն իրենց գրադարանը լցնում են գրքերով, որոնք այդպես էլ չեն կարդում, որովհետև անհնար է շատ հարուստ գրադարանի բոլոր գրքերը կարդալ: Նույն ձևով մարդը չի կարող բազում լավ ընկերներ ունենալ, նա պարզապես ժամանակ չի ունենա նրանց հետ շփվելու: Հիշենք մեր հանճարեղ բանաստեղծի՝ Ե.Չարենցի տաղը՝ ձոնված գրքերին, որում նա խոստովանում է.

*Օ՛, գրքերի աշխարհը – տիեզերք է անեզր:
...Նրանք շա՛տ են ու բազմապիսի, տարբեր ու գունազեղ,
Ծնված զանազան դարերում ու երկրներում,
Յուրաքանչյուրը բերում է մի առանձին պարզև,
Յուրաքանչյուրն իր մեջ մի աշխարհ է կրում:*

Bread is the staff of life.

Հացը կյանքի նեցուկն է:

«Հաց» ասելով հասկացվում է ուտելիք ընդհանրապես, որովհետև կան ժողովուրդներ՝ հաց ընդհանրապես չեն ուտում, ինչպես հյուսիսի էսկիմոսները: Հացը, որպես ուտելիք, հիշատակվում է նաև «Տէրունական աղօթք»-ում. «Հայր մեր... զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»: Հայկական մտածողության մեջ էլ «հաց ուտելն» ունի առավել ընդգրկում նշանակություն. «Գնանք հաց ուտելու», «Այսօր հաց կերե՞լ ես», «Մի կտոր հացի կարոտ» և այլն:

Խորիմաստ ձևակերպում է, որովհետև մարդը երբեք քաղցած չպետք է լինի, քաղցի պատճառով կյանքում հաճախ տեղի են ունենում դաժան ոճրագործություններ:

Brevity is the soul of wit.

Հակիրճությունը իմաստության ոգին է:

Այս անառարկելի ճշմարտությունն առկա է շատ ժողովուրդների բանահյուսության մեջ, նաև մեծ մտածողների ու գործիչների խոսքերում: Հայտնի է Հռոմի նշանավոր պետական գործիչ և զորահրամանատար Հուլիոս Կեսարի (101-44) հաղթական զեկույցը սենատին՝ բաղկացած երեք բառից՝ «Եկա, տեսա, հաղթեցի» („Veni, vidi, vici”): Հռոմեացի բանաստեղծ Քվինտոս Հորացիուսը (65-8) ասել է. «Ինչ խորհուրդ որ տաս, ասա կարճ»: Հայկականը՝ «խոսքի կարճն է լավ, մտքի երկարը»:

The bull must be taken by the horns.

Պետք է բռնել ցուլի եղջյուրներից:

Ցուլի հետ մենամարտելիս ուժեղ և հմուտ ցլամարտիկները բռնում և քաշում են ցուլի եղջյուրներից՝ արգելակելով վերջինիս հարձակումը: Այս տեսարանը պատկերված է հայ միջնադարյան գրականության մեջ: VII դարի պատմիչ Սեբեոսը նկարագրում է, թե ինչպես բյուզանդական կայսրը ապստամբ Սմբատ Բագրատունուն պատժելու համար նետում է Կոստանդնուպոլսի կրկեսը, և նրա վրա արձակում երեք գազաններ՝ արջ, ցուլ, առյուծ: Սմբատ Բագրատունին բռնում է ցուլի եղջյուրներից ու դրանք խորտակում, և կենդանին սարսափահար հետ է փախչում. *«Եւ ցուլն զնայր ի նմանէ փախստական, միով ոտամբն բոկ»*: Այս իմաստախոսությունն ասվում է նաև, երբ որևէ մեկին խորհուրդ է տրվում գործը բռնել հիմնովին և ոչ թե իմիջիայլոց:

Busiest men find the most time.

Շատ զբաղված մարդիկ գտնում են ամենաշատ ժամանակը:

Մարդիկ, ովքեր շատ գործ են կատարում, ունեն ամենաշատ եռանդը: Եվ երբեմն նրանք կարող են անել ավելին: Կարդինալ Սերսիենն ասում է. *«Եթե դուք ունեք որևէ լուրջ խնդիր լուծելու, դիմեք շատ զբաղված մարդկանց»*: Սա նշանակում է՝ շատ զբաղվածները գործի խնդրում պատասխանատու մարդիկ են ու աշխատում են լուծելի դարձնել ամեն ինչ:

Chercher la femme (ֆր.), Find the woman.

Փնտրեք կնոջը:

Հայտնի ֆրանսիական առած է, որը սովորաբար չի թարգմանվում: Եթե կա անհանգստացնող որևէ երևույթ, որը չի հասկացվում, թե ում մեղքով է, ապա հնարավոր է, որ դրանում խառը լինի կնոջ մատը:

Cleanliness is next to godliness.

Մաքրությունը կից է բարեպաշտությանը:

Խոսքը հոգու, նաև մարմնի մաքրության մասին է: Ավետայում զրադաշտական կրոնի դավանողներից խստորեն պահանջվում էր մարմնի ամենօրյա մաքրության խնամք, այլապես նրանք հավատարիմ չէին լինի Ահուրամազդային: Այս աքսիոման, անշուշտ, գալիս է դարերի խորքից: Ֆրենսիս Բեկոնը գրում է. *«Մաքրությունը ենթադրում է մշտական տուրք՝ տրված Աստծու մեծարմանը»:*

Do as you would be done by.

Վարվիր այնպես, ինչպես կուզեիր քեզ հետ վարվեն:

Այս կարևոր ասացվածքը շատ տարածված է քրիստոնեական և ոչ քրիստոնեական բարոյախոսություններում: Աշխարհը շատ ավելի կատարյալ կդառնա, եթե բոլորը հետևեն այս պատգամին: Նման է Մահաթմա Գանդիի խրատին՝ «Եթե ուզում ես աշխարհը փոխվի, սկսիր քեզնից»:

Do not cast your pearls before swine.

Մի՛ լցրու քո մարգարիտները խոզի առաջ:

Մի՛ նվիրիր որևէ թանկ բան մի մարդու, որը չի հասկանա դրա արժեքը: Այս իմաստախոսությունը Մատթեոսի Ավետարանից է. «Մի՛ տվեք սրբությունը շներին, և ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք, որպեսզի դրանք ոտքի կոխան չանեն և դառնալով ձեզ չպատառոտեն»: Սայաթ-Նովան Ավետարանի այս խոսքն օգտագործել է իր փիլիսոփայական խաղերից մեկում.

*Թեզուզ իմանաս, գիղենաս աստղերու համբարքը
սիրուն,*

*Անբարի գուրծը կորած է՝ կարթա Չարանց վարքըն
սիրուն.*

*Ավետարանի խոսկիրըն մարքարիտ է, կարքըն՝ սիրուն,
Մի՛ ածի խուզի առջիվըն լալ ու գովհար, Սայաթ-Նովա:*

Don't change horses in mid-stream.

Մի՛ փոխիր ձիերը հեղեղի մեջտեղում:

Կտրել-անցնել հեղեղը ձիու թամբին նստած հեշտ չէ, և փոխվել մի ձիու թամբից մեկ ուրիշին չարժե, վտանգավոր է: Ասացվածքը զգուշացնում է, թե երբ նստածում ենք որևէ բան փոխել, պետք է ընտրենք ճիշտ պահը:

Don't count your chickens before they are hatched.

Մի՛ հաշվեք ձեր ճտերը մինչև նրանց ձվից դուրս գալը:

Երբեք չի կարելի ճտերը հաշվել թխսի տակ դրված ձվերի քանակով. կարող է դրանց մեջ լինեն փչացած ձվեր: Դեռ հաջողության չհասած՝ մի հայտարարեք ձեր հաղթանակի մասին: Յայկականը՝ «ճտերն աշնանն են հաշվում»:

Don't cut the bough you are standing on.

Մի՛ կտրիր ճյուղը, որի վրա կանգնած ես:

Զգուշացնում է մարդկանց ապերախտ չլինել և չմտածված քայլերի դիմել: Սա հայ իրականության մեջ շատ տարածված ասացվածք է: Նույնն է. «Մի՛ թքիր այն ջրհորի մեջ, որից ջուր ես խմում»:

Don't put all your eggs in one basket.

Մի՛ դիր քո բոլոր ձվերը մի գամբյուղում:

Եթե ձվերը մի գամբյուղում են, կարող է վթար լինել և մի գամբյուղում եղած ձվերը ջարդվեն: Նույն կերպ ասացվածք կա՝ «Մի՛ պահիր քո դրամը մի գրպանում»:

Do not put new wine into old bottles.

Մի՛ լցրու նոր գինին հին գինու շշի մեջ:

Ընդհանրապես խուսափում են գինին լցնել այն շշերը, որոնցում արդեն գինի է եղել: Սա ասացվածքի ուղղակի իմաստն է, փոխաբերականը՝ պետք է ջանալ իրար հետ չդնել

այն, ինչը չի կարելի մի տեղում պահել: Այս նույն միտքը կա Ավետարանում. *«Ոչ էլ նոր գինին հին տիկերի մեջ են դնում, ապա թե ոչ տիկերը կպատռվեն, և գինին դուրս կթափվի, և տիկերը կփչանան, այլ նոր գինին նոր տիկերի մեջ են լցնում և երկուսն էլ պահվում են»:*

Don't speak to the man at the wheel.

Մի՛ խոսիր ղեկին նստած մարդու հետ:

Խիստ ժամանակակից ասացվածք է: Վարորդը, որը ղեկին է, իր ողջ ուշադրությունը պետք է դարձնի մեքենան վարելուն: Ուղևորը վարորդի ուշադրությունը չպետք է շեղի իր խոսակցությամբ, չի կարելի վարորդին ասել՝ ինչ անի և ինչ չանի: Ասացվածքի իմաստն այն է, որ չպետք է խանգարել այն անձին, ով պատասխանատու է ուրիշների անվտանգության համար:

Don't wash your dirty linen in public.

Մի՛ լվացեք ձեր կեղտոտ սպիտակեղենը բոլորի ներկայությամբ:

Իմաստն այն է, որ ամենևին չարժե ինտիմ և ընտանեկան խնդիրները քննարկել հրապարակավ՝ հատկապես, եթե դրանք խայտառակող բնույթ ունեն:

Dog does not eat dog.

Շունը շուն չի ուտում:

Հայկական իմաստությունն ասում է՝ «Շունը շան միս չի ուտում»: Հակառակն է մարդկային հասարակության մեջ եղած

գայլային օրենքի, ինչպես գայլերն ուտում են թույլ և հիվանդ գայլին, մարդիկ էլ ճնշում են թույլերին: Փոխաբերական իմաստով՝ գողերն անգամ պահում են գողի պատիվը:

Քուչակյան հայրեններից մեկուն կարդում ենք նույնը առյուծի մասին.

Առյուծն առյուծին մսեն թե հազար տան, նա չուտե.

Գեմ ինքն ալ առյուծ եղեր, զառյուծին փասն կու

պահե:

Ծառն գնալ չկարե յայն տեղացն, որ ինք բուսեր է.

Երբ կոթն ի ծառեն լինա, նա կացին զինքն կու կտրե:

Ծառի օրինակը փոխաբերական առումով խորհրդանշում է մարդկային հասարակությունը:

The early bird catches the worm.

Շուտ արթնացող թռչունն է ուտում որդը:

Հայկականը՝ «Շահում է շուտ արթնացողը»: Շատ ճիշտ խորհուրդ է օրը վաղ սկսելու և առավել եռանդուն ու արդյունավետ աշխատելու համար: Որպես կանոն՝ ծույլերը երբեք շուտ չեն արթնանում:

Easier said than done.

Հեշտ է ասելը, քան անելը:

Շատ հեշտ է խորհուրդ տալ, սակայն գործնականում այն չկատարել:

East or west, home is best.

Արևելք կամ արևմուտք, տունն ամենալավն է:

Մարդն ուր էլ գնա, ամենալավ տեղն աշխարհում հայրենիքն է ու իր տունը: Այս իմաստախոսությունը Հովհ. Թումանյանն արտահայտել է Ֆ. Շիլլերի «Ամենից լավ տունը» քերթվածի թարգմանությամբ.

*«Գըտա՞ր, զավա՛կըս», հարցրեց մայրը,
Ուրախ նայելով իր տղոյի վըրա:*

*«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,
Էն գորշ խըրճիթն է,
Էն հին խըրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:*

Easy come, easy go.

Հեշտ եկածը հեշտ կգնա:

Խիստ իմաստուն առած է, մեծ կենսափորձից է ծնվել: Այն մարդիկ, ովքեր հեշտությամբ են նյութական հարստություն ձեռք բերում, նույնքան հեշտությամբ էլ կորցնում են: Հայկա-

կանը՝ «Ջրի բերածը ջուրն էլ տանում է», «Քամու բերածը քամին էլ տանում է»:

Empty vessels make the most sound.

Դատարկ անոթները ամենաբարձր ձայնն են հանում:

Որևէ նյութով լցված անոթը չի կարող բարձր ձայն հանել: Առածի իմաստն ուղղված է այն մարդկանց, որոնց գլուխը դատարկ է, փոխարենը շատախոս են ու աղմկոտ:

The end makes all equal.

Վերջը բոլորին հավասարեցնում է:

Խոսքը մահվան մասին է, որը բոլորի համար ի վերջո նույնն է: Այս միտքն արտահայտել են հայ միջնադարի բազմաթիվ բանաստեղծներ՝ դրանով փորձելով մերժել հարստամոլությանը տառապողներին: Ֆրիկը գրում է.

*Իսկի տեսել չե՞ս կամ լսել
Ինչ մեծատուն մարդ է մեռել,
Իսկի դեկան հետ չի տարել,
Ինքն է ժողվել, և՛ այլք են կերել:*

Սկրտիչ Նաղաշի մոտ կարդում ենք.

*Երագ է ու սուտ, եղբայրք, աշխարհիս բաներն ի
լըման,*

*Ո՞ւր են թագաւորք, իշխանք, պարոնայք և սուլթան
ու խան.
Շինեցին բերդ ու քաղաք, դարպասնի ու շատ
դատեցան,
Յետոյ գէն անտէր թողին ու մըտան ի հող և՛ ի
զընտան:*

Հովհաննես Թումանյանն իր հանճարեղ քառյակներից մեկում ասում է.

*Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքըդ երկար,
կյանքըդ կարճ,
Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո
առաջ.
Ի՛նչ են տարել նըրանք կյանքից, թե ինչ տանես դու
քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվա էս
ճամփեդ:*

Even Homer sometimes nods.

Նույնիսկ Հոմերոսը երբեմն բացթողումներ ունի:

Նույնիսկ ամենախմաստուն մարդն էլ կարող է սխալներ անել: Հայկականը՝ «Անսխալական մարդ չկա»: Մարդկանց բացատրում է, թե բոլորն էլ սխալ կարող են անել, միայն թե նույն սխալը չպետք է կրկնել: Ֆրանսուա Վոլտերն ասում է. «Սիրիր ճշմարտությունը, բայց ներիր սխալը»:

Every dog has his day.

Ամեն շուն իր օրն ունի:

Բախտը մի օր ժպտում է բոլորին: Եթե ես այսօր երջանիկ եմ, դու մի տխրիր, քո հերթն էլ կգա: Հայկականը՝ «Աստված եթե մի դուռը փակում է, մյուսը բացում է»:

Every horse thinks its own pack heaviest.

Ամեն ձի մտածում է, թե իր բեռն ամենածանրն է:

Ամենքս կարծում ենք, թե ծանր բեռ ենք կրում, քան ուրիշները, որ ոչ ոք ավելի ծանր աշխատանք չի կատարում, քան մենք:

Every man is his own worst enemy.

Ամեն մարդ իր մեծագույն թշնամին է:

Յուրաքանչյուր անձ ունի իր բնավորությունը: Երբեմն մարդն իրեն թույլ է տալիս արարքներ, որոնք և՛ անձնական, և՛ հասարակական առումով խոտելի են: Սրա պատճառը հաճախ նրա բնածին էությունն է: Ահա այդ բնավորությունն էլ դառնում է նրա մեծագույն թշնամին:

Every medal has two sides.

Ամեն մեդալ ունի երկու կողմ:

Մեզանում շատ տարածված առած է: Երբ խոսում են մարդու վարքագծի կամ պահվածքի միայն մի կողմի մասին ու մոռանում են մյուս կողմը, ապա հիշեցնում են, որ մեդալը երկու երես ունի:

Everyone to his taste.

Ամեն մեկն իր ճաշակով:

Տարբեր մարդիկ ունեն տարբեր նախասիրություններ, իրենց սիրած և չսիրած արվեստագետները, գրողները, գիտնականներն ու մարդիկ: Հայկականը՝ «ճաշակին ընկեր չկա»:

Everything must have a beginning.

Ամեն ինչ պետք է ունենա սկիզբ:

Մարդիկ պետք է գիտակցեն, եթե որևէ մեծ երևույթ է տեղի ունենում, ապա դրա հիմքում ընկած է սկիզբ, որը կարող է նախապես լինել փոքր, սակայն կայուն, որպեսզի ունենա հետագա ընթացք:

Experience is the mother of wisdom.

Փորձառությունը իմաստության մայրն է:

Հենց փորձառությունից է ծնվում իմաստությունը: Մենք սովորում ենք սեփական սխալներից: Առած-ասացվածքները դարավոր փորձառության արդյունքն են՝ վերածված մարդկության համար խիստ պիտանի իմաստության:

An eye for an eye, and a tooth for a tooth.

Աչքը աչքի դիմաց, ատամն՝ ատամի:

Սա վրիժառության վարդապետությունն է, որը Հիսուսը փոխարինում է իր վարդապետությամբ. *«Լսել եք՝ ինչ ասվեց»*.

«Աչքի փոխարեն՝ աչք և ատամի փոխարեն՝ ատամ»: Իսկ ես ծեզ ասում եմ. չարին հակառակ չկանգնել. այլ եթե մեկը քո աջ ծնոտին ապտակ տա, նրան մյուսն էլ դարձրու: Եվ թե մեկը կամենա քեզ բռնադատել և քո շապիկն առնել, նրան քո բաճկոնն էլ թող: Եվ եթե մեկը քեզ հարկադրի մի մղոն ճանապարհ անցնել, նրա հետ երկու էլ գնա: Տո՛ւր նրան, ով քեզնից խնդրում է, և ով կամենում է քեզնից փոխ առնել, երես մի՛ դարձրու նրանից»:

Հայկական առած-ասացվածքների մեջ առկա են վրիժառույթան հետևյալ ձևակերպումները.

«խոտորնակին խոտորնակ (հակառակին հակառակ)»:

«Աչքդ հանողի հոգին հանիր»:

«Շանը շնով խեղդել կտան»:

«Սոխի մոտ սխտոր ծեծիր»:

«Գոմեշի կոտոշը – գոմեշի փորը»:

Fingers were made before forks.

Մատները պատառաքաղներից առաջ են ստեղծվել:

Մինչև պատառաքաղի գյուտը մարդիկ կերել են մատներով: Եթե չկա պատառաքաղ, ապա մարդը հին ժամանակների նման պատառաքաղի փոխարեն օգտագործում է իր մատները:

First impressions are most lasting.

Առաջին տպավորությունն ամենատևականն է:

Առաջին անգամ հանդիպելուց հետո նույն անձին կարող ենք բազմիցս տեսնել, սակայն առաջին տպավորությունը միշտ մնում է:

Forbidden fruit is sweetest.

Արգելված պտուղն ամենաքաղցրն է:

Առաժը գալիս է Հին կտակարանի «Ծննդոց գրքից», որում նկարագրված է Ադամի ու Եվայի աստվածային պատվիրանը խախտելն ու արգելված պտուղն ուտելը: Այդ հատվածը սրբագան մատյանում խորագրված է՝ «Մարդու անհնազանդությունը», որում պատկերված է, թե ինչպես Եվան տեսնելով, որ արգելված ծառի պտուղները աչքի համար փափագելի են և օձից լսելով, թե իրենք դրանք ուտելով պետք է աստվածանան՝ չարն ու բարին ճանաչեն, պոկում և ուտում է, ամուսնուն էլ է տալիս, նա էլ է ուտում: Ու նրանց երկուսի աչքերը բացվեցին ու մերկ լինելը գիտակցեցին, գիտակցեցին իրենց մերկ լինելն ու թզենու տերևներով իրենց ծածկեցին: «Ծննդոց գրքի» այս հատվածը XV դարի նշանավոր բանաստեղծ Առաքել Սյունեցին պատկերել է իր «Ադամգիրք» երկում.

ՏԵՐՆ ԱՍԷ

*Ես քո ստեղծողն եմ քաղցրագին,
Սիրով հարցնեմ ըզքեզ կըրկին,
Խոստովանեա՛ ինձ առանձին,
Մի՞թե կերար զպըտուղ չարին:*

ԱԴԱՍ ԱՍԷ

*Ձկինս որ ետուր ինձ ցաւ անձին՝
Սա զիս խաբեաց ի մէջ դրախտին.
Միաբանեալ սա ընդ օձին,
Ձիս ի փառաց մերկացուցին:
Սա ի ստեղծման օրն առաջին
Գուշակեցաւ ինձ ցաւ անձին,
Ձի կողոպտեաց սա զիս նախկին,
Ձկողս իմ հանեալ սըմա տըւին:
Սա որ յանձնէ իմնէ անկաւ,
Անկեալ դասին ընկերացաւ
Եւ ի նոցունց հընարք ուսաւ,
Եւ զիս խաբեաց պատըրդուակաւ:*

A friend in need is a friend indeed.

Նեղ օրվա ընկերը իսկական ընկեր է:

Երբ մարդը նեղության մեջ է, շատ ընկերներ արագ հեռանում են և չեն էլ հիշում դժվարության մեջ ընկած իրենց ընկերոջը, դրա համար էլ այն ընկերը, ով մնում է տուժածի կողքին ու փորձում է նրան օգնել, իսկական ընկեր է:

Give and take.

Տուր և վերցրու:

Պետք է պատրաստ լինել և՛ ուրիշին բարիք տալու, և՛ նրանից ստանալու: Կյանքում մարդը միակողմանի ձևով չպետք է

լինի, այլ երկու ձևով: Առանց տալու և վերցնելու կյանքը կկորցնի իր ներդաշնակությունը:

Give the devil his due.

Տուր սատանային իր տուրքը:

Անգամ ամենավատ մարդու մեջ կարող է լինել ինչ-որ լավ բան: Դրա համար անհրաժեշտ է ջանալ ճանաչել ուրիշների պիտանի հատկանիշները՝ չնայած նրանք մեր մտերիմները չեն: Չարի և բարու փոխհարաբերությունն ամենատարբեր խոսուև օրինակներով փաստում է Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոց» գրքում. *«Այլև, երբ մեկը կամենում է խիստ իշխանին մեղմության բերել, չի կարող գնալ ու բացեիբաց ասել, թե «Դու խիստ ես», այլ մոտենալով քաղցրախառն խոսքերով սիրաշահում է՝ ասելով. «Դու, տե՛ր, քաղցրաբարո ես և բարերար ամենքին, բոլորը քեզանից գոհ են ու քեզ արդարամիտ են համարում».* և այսպես կարողանում է մեղմությամբ փափկացնել իշխանի խստությունը, (նրան) խոնարհեցնել, արդարության ու պատշաճության մղել: Այստեղից էլ պարզ է, որ մարդկային էությունը ոչ թե չարիքների, այլ բարությունների ձգտող է»:

Give us the tools, and we will finish the job.

Տվեք մեզ գործիքները, և մենք կավարտենք գործը:

Ուինստոն Չերչիլի խոսքերն են՝ ուղղված ամերիկացիներին 1941-ի փետրվարի 9-ին: Ասվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի առիթով:

God helps those who help themselves.

Աստված օգնում է նրանց, ովքեր օգնում են իրենց:

Եթե որևէ մեկը ձգտում է հաջողության, ապա պետք է մեծ ջանքեր թափի: Հայկական առած-ասացվածքներում կարդում ենք. «*Դու քեզ օգնիր, Աստված էլ քեզ կօգնի*», «*Աստուց խնդրիր, բայց բահը ձեռքիցդ մի՛ գցիր*», «*Աստված ողորմած է՝ ասողը անոթի կմնա*»: Ռուսերեն շատ տարածված ասույթ է. „*На бога надейся, а сам не плошай*“.

The gods send nuts to those who have no teeth.

Աստվածներն ընկույզներն ուղարկում են նրանց, ովքեր ատամ չունեն:

Հաճախ մարդիկ չեն ստանում այն, ինչին արժանի են, և դրանք հասնում են անարժաններին:

The golden age was never the present age.

Ոսկե տարիները երբեք ներկա տարիները չեն:

«Ոսկե դար» է կոչվում որևէ ազգի կենսապայմանների կամ գրականության բուռն ծաղկումը: Նկատված է, սակայն, որ հենց այդ դարում ապրողները հաճախ չեն գիտակցում դարի այդպիսին լինելը. «ոսկե դարը» միշտ անցյալում է: Մովսես Խորենացին՝ հայ ոսկեդարի ամենանշանավոր դեմքը, իր հանճարեղ «Հայոց պատմությունն» ավարտում է հռչակավոր «Ողբով», որում խիստ քննադատում է իր ապրած

Ժամանակաշրջանն ու հասարակական բոլոր խավերին, բացի ռամիկներից:

A golden key opens every door.

Ոսկի բանալին բացում է ամեն դուռ:

«Ոսկի բանալի» է կոչվում դրանը, որի հնարավորությունները շատ մեծ են: Դրամի՝ փողի մասին կան հայկական բազմաթիվ առած-ասացվածքներ.

«Չունես փող, մտի հող»:

«Փողը փրկում է չարից»:

«Փողը փոքր աստված են անվանում»:

«Փող ունեցար աղա ես, չունեցար ծառա»:

«Փողը լեզու չունեցողի բերանը լեզու է դնում»:

«Փող եղավ, աշխարհը ձեռքդ կհամբուրի»:

«Փողից սարերն էլ են վախենում»:

«Կանխիկ փողը հանած թուր է»:

Փողի ուժի և վերջինիս մասին արհամարհանքի ուշագրավ դրսևորում կա XVIII դարի տաղերգու Պաղտասար Դպիրի «Առ մամոնայն» քերթվածում.

Ուստի՞ ծընար, ո՛վ բռնաւոր,

Որ քեզ նրման ո՛չ գոյ յերկրի,

Որ թէ չըտասս դու ձեռն ումեք,

Ո՛չ գօրանայ և ո՛չ բերկրի:

Թէ՛ թագաւորք և թէ՛ կայսերք

Քո օգնելոյդ են միշտ կարօտ,

Իսկ առանց քո՝ ե՛ն յոյժ տըկար,

*Որպես արջառ մի անարօտ:
... Դո՛ւ, որ բոլոր տիեզերաց
Բազում զօրաց եղեր իշխան,
Տրկար մի ոք ի մարդկանէ
Առնէ ըզքեզ ոտից կոխան:*

Հովհաննես Թումանյանի «Պոետն ու մուսան» պոեմում էլ կարդում ենք.

*Փողի քրսա՛կը, փողի քրսա՛կը
Բարձրացրնում է մարդու հասակը,
Գեղեցկացնում է հըրեշ տրգեղին,
Սըրբագործում է գարշն ու աղտեղին:
Նըրա ուժն է, որ դարձնում է լոկ
Անասուններին հարգի ու խելոք,
Կույսին, գառամին մոտեցնում իրար,
Չարին, վաշխառվին շինում բարերար,
Պըճնում ճակատը լիրբ ավազակի,
Կանգնեցնում արձան անվախճան փառքին:
Նա է միշտ շարժում դատողի լեզուն,
Նա է հասցրնում աղոթքն աստրծուն,
Նրա վըրա է աշխարհքը կանգնած.
Նա մեր հոգին է, մեր երկրորդ աստված:*

Good company on the road is the shortest cut.

Լավ ընկերներով ճանապարհը ամենակարճն է:

Երբ մարդը մենակ ճանապարհ է գնում, այն թվում է երկար, իսկ եթե հաճելի ընկերների հետ է, ապա ճանապարհը կարճ է թվում:

A good husband makes a good wife.

Լավ ամուսինը լավ կին է կերտում:

Ամուսինը, որ իր կնոջ հետ սիրով է վերաբերվում, ստանում է նույն պատասխանը: Ասույթի նպատակն է ընտանեկան ջերմության ապահովումը:

A good name is sooner lost than won.

Լավ անունը հեշտ է կորցնել, քան ձեռք բերել:

Շատ երկար ժամանակ է հարկավոր բարի համբավ ու հեղինակություն ստեղծելու համար, բայց այդ հեղինակությունը կարելի է շատ արագ կորցնել որևէ սխալ արարքի պատճառով:

A good tale is none the worse for being told twice.

Լավ հեքիաթը արժանի է կրկին պատմելու:

Երեխաները նույն հեքիաթը ցանկանում են լսել կրկին ու կրկին: Նրանք այնքան են տարվում այդ հեքիաթով, որ վերապատմելու ժամանակ պատմողի խոսքին լրացումներ ու հիշեցումներ են անում:

The grapes are sour.

Խաղողը խակ է:

Որոշ մարդիկ, երբ իրենց երազածին չեն կարողանում հասնել, սկսում են այն փնովել: Այս ասույթն առաջացել է եզոպոսի "The Fox and the Grapes" («Աղվեսն ու խաղողը») առակից: Սովամահ աղվեսը մտնում է խաղողի այգին և տեսնում է հյութեղ հասուն ողկույզներ, որոնք կախված էին բավական բարձր, սկսում է ցատկել, բայց չի հասնում դրանց ու իրեն սփոփելու համար ասում է, թե խաղողները խակ են: Հայկականը՝ «Աղվեսի դունչը խաղողին չհասավ, խակ է ասավ»:

Grasp all, lose all.

Չամթել ամեն ինչ, կորցնել ամեն ինչ:

Վերաբերում է ազահներին, ովքեր ձգտում են ամեն ինչ իրենց ձեռքը վերցնել և խլում են ուրիշներից: Այս իմաստախոսությունը ևս առաջացել է եզոպոսի "The Dog and the Shadow" («Շունը և ուրվականը») առակից: Շունը մսագործից թռցնում է մսի կտորը և գետի վրայից անցնելիս, երբ շտապում է իր բույնը, ջրի հայելու մեջ տեսնում է իր արտացոլումը՝ միսը բռնած մի շուն. նա շտապում է խլել իր տեսած շան բերանի մսի կտորը ու դունչը բացելով՝ կորցնում է իրենը: Հայկականը՝ «Շատի հետևից ընկնողը, քիչն էլ կկորցնի»:

A great city, a great solitude.

Մեծ քաղաք, մեծ մենություն:

Ասույթը գալիս է հույներից: Քաղաքակրթության մեծ կենտրոններում ապրում են հազարավոր մարդիկ, ովքեր զբաղված են միայն իրենց գործերով և բոլորովին չեն հետաքրքրվում

ուրիշներով: Եվ մեծ քաղաքում մարդն իրեն զգում է ինչպես անապատ կղզում:

Great oaks from little acorns grow.

Մեծ կաղնիներն աճում են փոքր կաղնիներից:

Ամեն մի մեծ գործ սկսվում է փոքր սկզբից: Երբեմն մեծ գործարաններ առաջանում են փոքր արհեստանոցներից:

The greatest talkers are the least doers.

Մեծ խոսողներն ամենաքիչ կատարողներն են:

Թովմաս Միդլթոնն ասում է. "Great talkers are never great doers" («Մեծ խոսողները երբեք մեծ գործ անողներ չեն»):

Հայկական առածանին նույն եզրահանգումն ունի տարբեր ասույթներում.

«Խոսքն ասելը չի, անելն է»:

«Մեծախոսի ձեռքից բան չի գա»:

«Ինքը պզտիկ, լեզուն մեծ»:

«Ապաշնորի մարդու լեզուն երկար է լինում»:

«Ձեռքից մի բան չի գալիս, լեզուն կոկորդ է պատռում»:

«Մեծ զրուցողին մեծ բերանը կմնա»:

«Մեծ խոսելով փլավ չի եփվի, յուղ ու բրինձ է հարկավոր»:

Half a loaf is better than no bread.

Կտոր հացը լավ է, քան հաց չլինելը:

Հարկավոր է շնորհակալ լինել այն փոքրի համար, որ ստանում ենք: Այս միտքը Մուրացանն օգտագործել է «Առաք-յալը» վիպակում: Պետրոս Կամսարյանը կշտամբում է տիրացու Մոսիին նրա խղճուկ դպրոցի համար, և Մոսին արդարանում է, թե ինքն այն կորեկ հացն է, որ տրվում է մարդուն սովից չմեռնելու համար, երբ չկա ավելի լավ հաց:

He cannot speak well than cannot hold his tongue.

Կարգին խոսել չգիտի, լեզուն իրեն քաշել չգիտի:

Իմաստախոսությունը հավաստում է որոշ դեպքերում լռելու անհրաժեշտությունը: «Լռությունը երբեմն ավելի բազմանշանակ է ու վեհ, քան ամենաընտիր և ամենաարտահայտիչ պերճախոսությունը, և շատ դեպքերում վկայում է մեծ խելքի մասին»,- նկատել է անգլիացի նշանավոր գրող Ջ.Ադիսոնը (1672-1719): Հայկականը՝ «*խոսքն արծաթ է, լռությունը ոսկի*»:

He is rich that has few wants.

Նա է հարուստ, ով քիչ ցանկություններ ունի:

Անձը, ով քիչ ցանկություններ ունի, կարող է հեշտությամբ դրանք բավարարել: Այս առումով նա ավելի հարուստ է, քան ունևորը, որն ունի բազում ցանկություններ և չի կարողանում բոլորն իրականացնել:

He laughs best who laughs last.

Ծիծաղում է նա, ով վերջում է ծիծաղում:

Հնարավոր է ձեր նախնական արդյունքը չունենաք գործի ավարտին, ուրեմն ժամանակից շուտ մի ուրախացեք, քանզի կարող է հետո ձեր վերջնական ձախողության համար ուրիշներն ուրախանան և ծիծաղեն: *Ծիծաղը լավ բան է, եթե վերջը լաց չդառնա:*

He should have a long spoon that sups with the devil.

Նա, ով ընթրում է սատանայի հետ, պետք է երկար գդալ ունենա:

Ով խառնվում է սատանայի միջավայրին, պետք է նրա հնարքների մասին քաջատեղյակ լինի: Հավասարազոր է՝ «*Գայլի հետ ապրողը գայլություն կանի*», „*С волками жить — по волчьим выть*“.

He that cannot obey cannot command.

Նա, ով չի կարող ենթարկվել, չի կարող հրամայել:

Նախքան հրամայելը մենք պետք է վարժված լինենք ենթարկվելու հրամաններին: Փորձը բերում է մարդու հասունացմանը: Ղեկավարը պետք է ծանոթ լինի նաև հնազանդվելու արվեստին, տարբերակի կամավոր հնազանդվելը պարտադրվածից:

He that commits a fault thinks everyone speaks of it.

Նա, ով սխալ է անում, մտածում է, թե բոլորն այդ մասին են խոսում:

Երբ մարդը սխալ է անում ու դա գիտակցում է, նրան թվում է, թե բոլորն այդ մասին գիտեն և խոսում են:

He that has a great nose thinks everybody is speaking of it.

Նա, ով մեծ քիթ ունի, կարծում է, թե բոլորը դրա մասին են խոսում:

Մի տանջվեք, եթե մեծ քիթ կամ ցցված ականջների ունեք, կամ չեք հասցրել առավոտյան մաքրել ձեր կոշիկները, դուք երբեմն առավել անհանգիստ եք այդ թերությունների համար, քան ուրիշները դրանք նկատում են:

He that would eat the kernel must crack the nut.

Նա, ով ուզում է ուտել ընկույզի միջուկը, պետք է ջարդի ընկույզը:

Հնարավոր չէ նուշը կամ ընկույզն ուտել առանց դրանց կեղևը ջարդելու: Նույն կերպ հնարավոր չէ որևէ հաջողության հասնել առանց այդ ուղղությամբ ջանքեր գործադրելու:

He that would the daughter win, must with the mother first begin.

Նա, ով ուզում է նվաճել աղջկան, պետք է սկսի մորից:

Ասացվածքը վերաբերում է ամուսնությանը: Շատ մայրեր վարժեցրել են աղջիկներին ենթարկվելու իրենց կարծիքին, դրա համար էլ ամուսնացողը նախ պետք է քայլ կատարի մոր համակրանքը շահելու և ապա անցնի աղջկան ամուսնության առաջարկ անելուն:

He who begins many things, finishes but few.

Նա, ով շատ գործ է բռնում, քիչն է ավարտին հասցնում:

Շատ մարդիկ կարիք ունեն կենտրոնանալու: Նրանք սկսում են մի գործ, հետո հոգնում են ու անցնում մեկ ուրիշին, ի վերջո, ոչ մեկն էլ ավարտին չեն հասցնում:

He who makes no mistakes makes nothing.

Ով սխալներ չի անում, ոչինչ չի անում:

Չկա մարդ, որ սխալ չանի: Եթե մեկը կարծում է, թե ինքը կարող է սխալ չանել, ուրեմն նա ոչ մի լուրջ գործ չի անում:

He who would climb the ladder must begin at the bottom.

Նա, ով ուզում է բարձրանալ սանդուղքը, պետք է սկսի հիմքից:

Հրաշալի խորհուրդ է երիտասարդների համար, ովքեր ուզում են հասնել աշխատանքային բարձունքին: Նրանք նախ պետք է ցածրաստիճան աշխատանք անեն և ապա բարձրանան քայլ առ քայլ:

Health is better than wealth.

Առողջությունը լավ է, քան հարստությունը:

Ավելի լավ է առողջ լինել, քան հարուստ, քանի որ անառողջ մարդն իրեն դժբախտ է զգում, թեկուզ հարուստ էլ լինի: Սա յուրօրինակ սփոփանք է աղքատների համար, ովքեր առողջության խնդրում գերազանցում են որոշ հարուստների:

A heavy purse makes a light heart.

Ծանր քսակը սիրտը թեթևացնում է:

Մարդը ուրախ տրամադրություն է ունենում, երբ դրամական դժվարություններ ու հոգսեր չի ունենում: Սրա հակառակն է՝ *«Թեթև քսակը ծանրացնում է սիրտը»:*

Hide not your light under a bushel.

Մի թաքցրեք ձեր լույսը բուշելի տակ:

Բուշելը սորուն մարմինների տարողության անգլիական չափ է: Այս առածի աղբյուրը Մատթեոսի Ավետարանն է, ուր ասվում է. *«Դուք եք երկրի աղը, սակայն եթե աղը անհամանա, ինչո՞վ այն կաղվի, այնուհետև ոչ մի բանի վրա չի ազդի, այլ միայն դուրս կթափվի և մարդկանց ոտքի կոխան կլինի: Դուք եք աշխարհի լույսը. մի քաղաք, որ լեռան վրա է կանգնած, չի կարող թաքնվել: Եվ ճրագ չեն վառում ու գրվանի տակ դնում, այլ՝ աշտանակի վրա, և նա լույս է տալիս բոլոր նրանց, որ տան մեջ են: Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ,*

որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Յորը, որը երկնքում է»:

History repeats itself.

Պատմությունը կրկնում է իրեն:

Այն, ինչ մի անգամ եղել է, կարող է կրկնվել: Գրողները պատմավեպեր գրում են հենց այն նպատակով, որ իրենց հայրենակիցներին զգուշացնեն պատմության կրկնությունից ու զերծ պահեն սխալներից:

If at first you don't succeed, try, try, try again.

Եթե առաջին անգամ չես հաջողում, ջանա, ջանա, ջանա նորից:

Ասույթը սովորեցնում է համբերություն: Եթե առաջին անգամ փորձը չի ստացվում, չպետք է նեղսրտել, այլ կրկնել նորից ու նորից, մինչև հաջողությամբ պսակես սկսածդ:

If each would sweep before his own door, we should have a clean city.

Եթե ամեն մեկը նախ իր դռան առջևը մաքրի, մենք կունենանք մաքուր քաղաք:

Ասված է բոլոր ժամանակների համար: Քաղաքի մաքրությունը կախված է նրա քաղաքացիների ընդհանուր մաքրասիրությունից: Երբեմն մարդիկ մաքրում են իրենց տունը և աղբը լցնում դռան առաջ, որից և տուժում է համընդհանուր մաքրությունը: Քաղաքի մաքրության համար պատասխանատու են

Նրա բոլոր բնակիչները: Հայկականը՝ «Աղքատ ապրելը ամոթ չի, կեղտոտ ապրելն է ամոթ»:

If the blind lead blind, both shall fall into the ditch.

Եթե կույրն առաջնորդում է կույրին, երկուսն էլ կընկնեն փոսը:

Սա գալիս է Մատթեոսի Ավետարանից. «Ամենայն տունկ, որ իմ երկնավոր Հայրը չի տնկել, արմատախիչ պիտի արվի: Թողեք նրանց՝ կույրեր են, կույրերի առաջնորդ. երբ կույրն է առաջնորդում կույրին, սխալվում է, և երկուսն էլ փոսն են ընկնում»: Նշանակում է՝ գիտելիք չունեցողը չպետք է ուսուցանի տգետի, երկուսն էլ կմնան նույն տգետը: Հոգևոր կուրության մասին խոսել է Եղիշեն իր «Վարդանանց պատմության» մեջ. «Եվ այս բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից: Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից: Լավ է աչքով կույր [լինել], քան մտքով կույր: Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմնի տեսողությունից»:

If the mountain will not come to Mahomet, Mahomet must go to the mountain.

Եթե սարը չի գնում Մուհամեդի մոտ, Մուհամեդն է գնում սարի մոտ:

Հայ իրականության մեջ շատ տարածված ասույթ է. նշանակում է՝ եթե դու անկարող ես գնալ քո սեփական ճանա-

պարհով, ապա ուրիշներից կախված լինելն անխուսափելի է: Այս ասույթը արաբական միջավայրում հետևյալ բովանդակությունն ունի: Մուհամեդը Մեքքա սրբազան քաղաքի մոտ գտնվող Սաֆա լեռանը հրահանգում է գալ իր մոտ: Երբ սարը տեղից չի շարժվում, նա ասում է. *«Աստված ողորմած է: Եթե սարն ինձ ենթարկվեր, այն կընկներ ու կավերեր մեզ: Ահա այդ պատճառով ես կզնամ սարի մոտ և շնորհակալ եմ Աստծուն, որ նա բարեգութ է մեր նկատմամբ»:*

If two men ride on a horse, one must ride behind.

Եթե երկու մարդ ձի են քշում, մեկը պետք է քշի հետևում:

Մի գործում երկու առաջնորդ լինել չեն կարող: Հետևում նստածը պետք է առաջինին թողնի, որ նա ձին քշի:

If you want a thing well done, do it yourself.

Եթե ուզում ես գործը լավ արվի, արա ինքդ:

Սա հրաշալի խորհուրդ է մարդուն, որ հույսն իր վրա դնի, որովհետև այն, ինչ մեկին շատ պետք է, նա էլ հոգատար կլինի: Ոչ ոք չի կարող երեխային այնքան լավ պահել, որքան սեփական մայրը:

If you want peace, prepare for war.

Եթե խաղաղություն ես ուզում, պատրաստվիր պատերազմի:

Եթե երկիրը լավ գինված է նվաճողներին դիմադրելու համար, ապա այն դժվար թե հարձակման ենթարկվի: Այս խոսքերն ասել է ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Վաշինգթոնը կոնգրեսում 1790-ի հունվարի 8-ին:

Այս նույն միտքը կա հայ ազգային էպոսում՝ «Սասունցի Դավթուն»: Դավիթը վերաշինում է Մարութա վանքը, սակայն ամեն առավոտ կառուցածը քանդվում էր: Աստվածային երազ է գալիս Դավթին, որը հրահանգում է վանքի հիմքում դնել Դավթի թուրը, որից հետո վանքն այլևս չի քանդվում: Այսինքն՝ խաղաղությունը երկրում պահպանելու համար ամեն ժողովուրդ պետք է պատրաստ լինի զորեղ ինքնապաշտպանության.

*- Դրողբե՛ր, Քեռի, ձեր անուշ քնից վե՛ր էլեք:
Մարութա բարձր Աստվածածին էսօր էկե ինձի էրազ.
Իմ մեջքեն իմ թուր տի քաշեմ՝
Վանքի հիմ իմ թրին տի դնեմ,
Վանք տի շինեմ, տի թամամեմ:
Պատարազ մեջ տի մատուցեմ:*

In a calm sea every man is a pilot.

Խաղաղ ծովում ամեն մարդ նավատար (լոցման) է:

Մենք պատրաստ ենք ուրիշներին խորհուրդներ տալ, երբ ինքներս ռիսկի չենք դիմում, բայց երբ կա վտանգ, հրաժարվում ենք որևէ բանի մասնակցելուց: Մարդու խոսքի և գործի հակասության մասին է:

In the country of the blind, the one-eyed man is king.

Կույրերի երկրում մի աչք ունեցողն արքա է:

Երբ մարդը զգում է իր առավելությունն ուրիշների նկատմամբ, նա իրեն վերագրում է մի մեծություն, որն իրականում գոյություն չունի:

In wine there is truth.

Ճշմարտությունը գինու մեջ է:

Զգաստ մարդն իր լեզվին հետևում է՝ չասելով այն, ինչը կուզեր թաքուն պահել: Հարբածը կորցնում է լեզվի դեկը և կարող է ուրիշներին ասել իր գաղտնիքները: Երբեմն մարդը հատուկ գինի է խմում, որ նրա ազդեցությամբ ասի այն, ինչ զգաստ ժամանակ քաշվում է ասել: Լատինական հանրահայտ խոսք է՝ *"In vino veritas"*.

Ալեքս Էբեռսպիչերը 1938-ին գիրք է գրել *"Vino Veritas"* խորագրով, որում հանրամատչելի ձևով նկարագրում է հնադարից մինչև նոր ժամանակներն անցած գինու ճանապարհը:

It is a foolish sheep that makes the wolf his confessor.

Տխմար ոչխարն է գայլին դարձնում խոստովանահայր:

Երբեք չի կարելի քո գաղտնիքն ասել օտարին, քանի որ դու չգիտես նա ով է և ինչ կարող է նյութել քո դեմ՝ իմանալով գաղտնիքդ:

It is better to give than to take.

Լավ է տալ, քան վերցնել:

Այս ասույթի աղբյուրը «Գործք առաքելոցից» է. *«Ես ամեն ինչ ձեզ ցույց տվեցի, որովհետև այդպես պետք է աշխատել և դարձանել հիվանդներին ու հիշել Տեր Յիսուսի խոսքը, որ ինքն իսկ ասաց. «Երանելի է մանավանդ տալը, քան առնելը»:*

It is too late to lock the stable when the horse has been stolen.

Չափազանց ուշ է կողպել ախոռը, երբ ձին գողացել են:

Անհմաստ է անվտանգության որևէ գործ ձեռնարկել, երբ գողությունն արդեն կատարվել է: Ֆրանսիական տարբերակն է՝ **“Après la mort, le médecin”**, **“After the death, the doctor”** («Մահից հետո բժիշկ պետք չէ»): Ռուսականը՝ **„После ужина горчица“**.

Judge not, that ye be not judged.

Մի՛ դատիր, որ չդատվես:

Մտածիր նախքան ուրիշներին քննադատելը, որովհետև նույն ձևով կարող են քննադատել նաև քեզ: Աղբյուրը Մատթեոսի Ավետարանն է. *«Մի՛ դատեք, որ չդատվեք, որովհետև ինչ դատաստանով, որ դատեք, նրանով եք դատվելու և ինչ չափով որ չափում եք, պիտի նրանով չափվի ձեզ համար: Ինչո՞ւ քո եղբոր աչքի միջի շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի մեջ գերանը*

*չես տեսնում. կամ ինչպես քո եղբորն ասում ես, թող որ հանեն
այդ շյուղը քո աչքից և ահա քո աչքում գերան կա: Կեղծավոր,
նախ հանի՛ր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես քո
եղբոր աչքից շյուղը հանելու համար»:*

Keep something for a rainy day.

Պահիր մի բան անձրև օրվա համար:

Առածում «անձրև օր» նշանակում է տառապանք կամ դժբախտություն: Խորհուրդ է տրվում լինել խնայող: Եթե դու այսօր լավ փող ես վաստակում, մի՛ շռայլիր այն, մի մասը պահիր, որովհետև կարող են գալ դժվար ժամանակներ, ուրեմն՝ մտածիր ապագայի մասին:

Kill not the goose that lays the golden eggs.

Մի՛ մորթիր այն սագը, որը ոսկի ձվեր է ածում:

Այս առածի աղբյուրը Եզրպոսի հայտնի առակն է. "The Goose with the Golden Eggs" («Ոսկի ձվերով սագը»): Մի մարդ երջանիկ էր, որովհետև ուներ սագ, որն ամեն օր ոսկի ձու էր ածում: Սակայն սագի տիրոջը չի բավարարում օրը մի ոսկի ձու ունենալը, և նա ուզում է արագացնել ձու ածելը, որ ավելի շատ ոսկի ձվեր ունենա: Նա մորթում է սագին, նոր ձվեր հանելու համար, սակայն սագի ներսում ոչինչ չի գտնում. սագը դառնում է սովորական մորթված սագ: Առակի բարոյախոսական եզրակացությունն է.

"The more you want, the more you stand to lose".

«Որքան շատ ուզես, այնքան շատ կկորցնես»:

Առածն ուղղված է ազահներին, ովքեր ավելի հարստանալու մոլուցքով կորցնում են նախկինում ձեռք բերածը:

Knowledge is power.

Գիտելիքը ուժ է:

Որքան հարուստ է մարդու գիտելիքը, այնքան մեծ է նրա ազդեցությունը ուրիշների վրա:

The labourer is worthy of his hire.

Մշակն արժանի է իր վարձին:

Արդար լինելու խորհուրդ է: Քեզ համար աշխատողին չի կարելի թողնել առանց վարձատրության: Աղբյուրը Ղուկասի Ավետարանում Յիսուսի խոսքն է՝ ուղղված յոթանասուներկու աշակերտներին. *«Այնուհետև Տերը մշանակեց ուրիշ յոթանասուներկու հոգի և և նրանց իրենից առաջ երկու-երկու ուղարկեց այն բոլոր քաղաքներն ու վայրերը, ուր ինքը գնալու էր: Եվ նրանց ասաց. «Դունձն առատ է, իսկ մշակները՝ սակավ: Արդ, աղաչեցե՛ք հնձի տիրոջը, որ մշակներ դուրս հանի իր հնձի համար: Գնացե՛ք, ահա ուղարկում եմ ձեզ իբրև գառներ գայլերի մեջ: Մի՛ վերցրե՛ք ո՛չ քսակ, ո՛չ մախաղ, ո՛չ կոշիկներ և ճանապարհին ո՛չ ոքի ողջույն մի՛ տվե՛ք: Որ տունը մտնե՛ք նախ ասացե՛ք. «Խաղաղություն այս տանը»։ Եթե այնտեղ կա խաղաղության որդի, ձեր խաղաղությունը նրա վրա կհանգչի, ասպաթե ոչ, ձեզ կվերադառնա: Նույն տանը գիշերեցե՛ք, կերե՛ք և*

խմեցե՛ք նրանց ունեցածօից, որովհետև մշակը արժանի է իր վարձին. տնից մի տեղափոխվեք: Որ քաղաքը մտնեք և ձեզ ընդունեն, կերեք, ինչ որ ձեր առաջ դնեն: Եվ բժշկեցե՛ք դրա մեջ եղած հիվանդներին և նրանց ասացե՛ք. «Մոտեցել է ձեզ Աստծո արքայությունը»:

The last straw breaks the camel's back.

Վերջին ծղոտը ջարդում է ուղտի մեջքը:

Եթե դուք ավելացնում եք ուղտի բեռան ծանրությունը ծղոտ առ ծղոտ, վերջին ծղոտը կարող է ջարդել նրա մեջքը: «Վերջին ծղոտ» ասելով հասկացվում է տառապանքի վերջին սահմանը, որին մարդն այլևս չի կարող դիմանալ: Վերջին կաթիլը բաժակից թափում է ջուրը: Հայկականը՝ «*Վերջին կաթիլը լցնում է համբերության բաժակը*», ռուսականը՝ „*Всякому терпению бывает конец*“, „*Последняя капля переполняет чашу*“: Երբեք չի կարելի մարդու համբերությունը չարաշահել:

Laugh and the world laughs with you, weep and you weep alone.

Ծիծաղե՛ք, և աշխարհը ձեզ հետ կծիծաղի, ողբացե՛ք և դուք կողբաք մենակ:

Եթե դուք ուրախ եք ու բարեկեցիկ, մարդիկ ձեր շրջապատում կլինեն, իսկ երբ տխուր եք ու մռայլ, մարդիկ կհեռանան ձեզնից:

Learn to walk before you run.

Սովորիր քայլել նախքան վազելը:

Գիտելիքը երբեք միանգամից ձեռք չի բերվում: Այն ձեռք է բերվում քայլ առ քայլ: Նախքան թվաբանական տարրական խնդիրներ լուծելը, չես կարող հանրահաշվական բարդ խնդիրներ լուծել:

The leopard cannot change his spots.

Ընծառյուծը չի կարող իր պուտերը փոխել:

Նշանակում է՝ մարդը չի կարող իր բնավորությունը փոխել: Առածն այս ձևով օգտագործել է Երեմիա մարգարեն.
«Մի՞թե հնարավոր է եթովպացին փոխի իր մաշկի գույնը կամ ընծառյուծը իր պուտերը, որ դուք չարության սովորած լինելով կարողանաք բարություն անել»:

Նույն իմաստն ունեն՝

«Կարմիր կովն իր կաշվից դուրս չի գա»:

«Սապատավորին միայն գերեզմանը կուղղի»:

«Սև շունը չի սպիտակի»:

„Горбатого могила исправит“.

Let not thy left hand know what thy right hand doeth.

Թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը:

Իմաստախոսության աղբյուրը Մատթեոսի Ավետարանն է.
«Ձգո՛ւյշ եղեք, որ ձեր ողորմությունը մարդկանց առջև չաներ»

*որպես թե այն լիներ ի ցույց նրանց, գուցե վարձն էլ չընդունե՞ր
Յորից, որ երկնքում է: Այլ երբ ողորմություն անես, փող մի՛
հնչեցրու քո առջև, ինչպես անում են կեղծավորները ժողովա-
րաններում և հրապարակներում, որպեսզի փառավորվեն
մարդկանցից: Այլ երբ դու ողորմություն անես, թող քո ծախ
ծեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո
ողորմությունը ծածուկ լինի, և քո Յայրը, որ տեսնում է
ծածկապես, կհատուցի քեզ հայտնապես»:*

Իմաստն այն է, որ եթե օգնում ես աղքատին, արա այդ
գաղտնի: Մի՛ պարծեցիր ողորմություն տալու համար: Այս
ճշմարտությունը հիանալի է պատկերել Ասորպետը «ՏԺՎԺԿԼը»
պատմվածքում:

Liars should have good memories.

Ստախոսները պետք է լավ հիշողություն ունենան:

Եթե մարդը ճշմարտախոս է, նա հանգիստ է իր խոսքերի
համար, որովհետև միշտ նույն բանն է ասում: Բայց եթե որևէ
մեկը ստախոս է ու երկրորդ անգամ նրան հարց են տալիս նույն
խնդրի և նույն մարդու մասին, նա չի հիշում, թե առաջին
անգամ ինչ է հորինել և հորինում է նոր սուտ ու բռնվում ստի
մեջ: Ստախոսության վերաբերյալ հայ բանահյուսության մեջ
առկա է առած-ասացվածքների առատություն.

«Սուտ ասողի տունը կրակ ընկավ, չհավատացին»:

*«Սուտ ասողի վաստակն էն է, որ ճշմարիտ էլ ասի, չեն
հավատա»:*

«Սուտասան մարդը հիմնական տեղ չունի»:

«Սուտասանի ծրագը մինչև կեսգիշեր կվառի»:

«Սուտ խոստողի լեզուն կարճ կլինի»:

«Սուտը ասողի տունն է քանդու»:

«Սուտը ճամփա չունի»:

«Ստի ոտները կարճ են»:

«Մինչև դորթը գա, սուտն աշխարհը կուտի»:

Այս վերջին բանաձևունն առկա է Սայաթ-Նովայի «Աշխարհըս մե փանջարա է» խաղում.

Ղուրթս ենդուր ճամփա չէ գնում՝ շատացիլ է խալխի սուտըն:

Life is short and time is swift.

Կյանքը կարճ է և ժամանակը կարճատև:

Վայելիր կյանքը, քանի դեռ ապրում ես. իրական կյանքում այլևս երբեք չես լինելու: Հելլենիզմի դարաշրջանի հույն փիլիսոփա Էպիկուրը (341-270) բարոյագիտության մեջ հիմնավորում է խելացի հաճույքը, որի հիմքում ընկած է տառապանքներից խուսափելու և հոգու խաղաղ ու բերկրալից վիճակի հասնելու անհատական իդեալը: XI դարի պետական նշանավոր գործիչ, գիտնական և մատենագիր Գրիգոր Մագիստրոսը (990-1058) իր թղթերից մեկում խիստ քննադատելով թոնդրակեցիների աղանդը՝ հիշեցնում է, թե վերջիններս շարունակ քարոզում են, թե չկա ոչ դրախտ և ոչ էլ Աստված, ինչպես ասում էին էպիկուրյանները: Իրական կյանքը խելացի վայելելու խոհը կա և՛ հայ միջնադարյան քնարերգության մեջ, և՛ թե նոր ժամանակներում: Նաղաշ Յովնաթանը գրում է.

*Վաղիւն ոչ գիտես, թե զի՞նչ ծնանի,
Մարդոյս կեանքն վայրի ծաղկի նմանի,
Որ այսօր բացուեալ է, վաղիւն անցանի.
Խմենք, եղբա՛րք, գինի,
Բանն աստուած շինի:*

Կարծես թե նրան ձայնակցելով՝ Հովհաննես Թումանյանն էլ ասում է.

*- Էս է, որ կա... Ծիշտ եմ ասում. թասըդ բե՛ր:
Էս էլ կերթա՝ հանց երագում, թասըդ բե՛ր:
Կյանքն հոսում է տիեզերքում զընգալեն,
Մեկն ապրում է, մյուսն ըսպասում. թասըդ բե՛ր:*

Like father, like son.

Ինչպես հայրն է, այնպիսին էլ տղան:

Շատ տղաներ նմանվում են իրենց հորը ոչ միայն արտաքին տեսքով, այլև բնավորությամբ, և հաճախ էլ ժառանգած բնավորության գծերը լավագույններից չեն լինում:

Հայ բանահյուսական ասույթներ.

«Հորը տեսնեմ, մորը տեսնեմ, տղան էլ նրանց նման տեսնեմ»:

«Տղայի լավը հորից-մորից կլինի»:

«Լավ մարդու որդին անպիտան չի դուրս գա»:

Little by little and bit by bit.

Քիչ-քիչ և փշուր-փշուր:

Առածը սովորեցնում է լինել համբերող և համառ: Չպետք է վիատվել ստացված փոքր արդյունքից, այլ պետք է ջանալ առաջ անցնել, հենվել փոքրին ու հասնել ցանկալի հաջողության: Հիշարժան է ամերիկյան պետական գործիչ, գիտնական և գրող Բենջամին Ֆրանկլինի (1706-1790) հետևյալ միտքը. *«Ով ունի համբերություն, կունենա այն, ինչին ձգտում է»:*

A little learning is a dangerous thing.

Քիչ գիտելիքը վտանգավոր բան է:

Սարդիկ, ուլքեր քիչ գիտելիք ունեն, հաճախ անտեղյակ են իրենց տգիտությանը ու, հետևաբար, հեշտությամբ են սխալվում:

Live and learn.

Ապրի՛ր և սովորի՛ր:

Կենսափորձը մեծագույն ուսուցիչն է: Որքան երկար ես ապրում, այնքան շատ բան ես սովորում: Հայկականը՝ *«Մարդ ինչքան ապրի, էնքան կսովորի»:* Այս միտքը երբեմն ռուսներն օգտագործում են կատակով՝ *„Век живи, век учишь, все равно останешься дураком“.*

Live not eat, but eat to live.

Մի՛ ապրիր ուտելու համար, այլ կե՛ր ապրելու համար:

Նշանակում է՝ մարդը չպետք է ապրի միայն ուտելու համար, որովհետև ուտելը կյանքի միակ նպատակը չէ, այլ միջոց է այլ նպատակների հասնելու ճանապարհին:

Look before you leap.

Նախքան թռչելը նայի՛ր:

Զմտածված գործեր մի՛ անիր: Նախ որոշիր, թե ինչ և ինչպես ես անելու, ապա կատարիր, այլապես կարող ես ձախողվել: Հայկական ասույթներ՝

«Առուն չթռած «հոպ» մի՛ ասա»:

«Զուրը չանցած գլուխ մի՛ գովի»:

Love is blind.

Սերը կույր է:

Ով սիրում է, սիրած էակի թերությունները չի նկատում: Այս առածը կա գրեթե բոլոր ժողովուրդների մոտ:

Հայկականը՝

«Սիրածի աչքին վարագույր կլինի, լավն ու վատը չի ջոկի»:

«Սերն աթարիցն ա կպել»:

«Սրտի ուզածը սիրուն կլինի»:

Ռուսականը՝

„Любовь слепа“.

„Любовь зла — полюбишь и козла“.

Ֆրանսիականը՝

”L’amour est aveugle”.

The love of money is the root of all evil.

Փողի նկատմամբ սերը ամեն չարիքի արմատն է:

Ասույթի աղբյուրը Պողոս առաքյալի՝ Տիմոթեոսին ուղղված առաջին թուղթն է. *«Իսկ ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձության և որոգայթի և բազում անմիտ ու վնասակար ցանկությունների մեջ, որոնք ընկղմում-տանում են մարդկանց դեպի կործանում և դեպի կորուստ, որովհետև բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, որին ոմանք ծգտելով՝ վրիպեցին հավատից և իրենց զցեցին բազում ցավերի մեջ»:*

Փողի ավերիչ ու կործանարար ուժի մասին խիստ խոսուն գրել է XI դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցին իր պատմության մեջ, երբ ուզում է բացատրել, թե ինչու կործանվեց Արծն քաղաքը. *«...և արդարության օրենքը փոխվեց անիրավության, արծաթասիրությունը ավելի հարգի դարձավ, քան աստվածասիրությունը, և մամոնան ավելի՝ քան Քրիստոսը. այն ժամանակ ամեն կարգի համեստությունը խոտորվելով՝ վերածվեց անկարգության: Սրա իշխանները դարձան գողերի գողակից, վրիժառու և արծաթի ծառաներ, դատավորները՝ կաշառակեր և կաշառքի համար արդարությունը խարդախողներ, ո՛չ որբերի իրավունքն էին պաշտպանում, ո՛չ այրիների դատը հանձն առնում: ...Ով խաբում էր իր ընկերոջը, պարծենում էր, որ խելացի է, իսկ ով հափշտակում էր, ասում էր՝ «Ես հզոր եմ»: Դրացի աղքատների տներն ու նրանց արտերի սահմանները հարուստները հափշտակում էին ու չէին մտաբերում տիրոջ ծառա Մովսեսի ձեռքով գրված աստվածա-*

պատկեր անծօքը. «Անհծյալ է նա, ով հափշտակում է ընկերոջ արտերը», կամ Եսայու այդպիսիներին սաստող կշտամբանքը. «Վա՛յ նրանց, որոնք տունը տան և արտը արտին են միացնում, որպեսզի ընկերոջը խլեն»: Փողի կործանարար ուժի մասին են վկայում հայկական մի շարք առածները, որոնցից օգտագործել է Խաչատուր Աբովյանն իր հանճարեղ գլուխգործոցում՝ «Վերք Յայաստանի» վեպում.

«Փողը որ կա ձեռի կեղտ ա»:

«Փողը որ կա ժանգ ա»:

«Փողն ու հողը մեկ է»:

«Չունես փող, մտիր հող»:

Love will find a way.

Սերը կգտնի ճանապարհը:

Խոսքը սիրո ուժի հզորության մասին է. ըստ որում, թե՛ տղամարդու և կնոջ, թե՛ հարազատների և թե՛ սիրած գործի խնդիրներում, որովհետև իսկական սերը հաղթահարում է բոլոր դժվարությունները: Այդ մասին վկայում են բազմաթիվ գրքեր: Գրիգոր Նարեկացին «Երգ երգոցի» մեկնության մեջ աստվածաշնչային այդ եզակի գրքի այլաբանական իմաստը բացատրելիս հիշեցնում է, թե երկրի վրա չկա ավելի պատվական որևէ երևույթ, քան տղամարդու և կնոջ սերը միմյանց նկատմամբ. *«Արդ, չիք յերկրի պատուականագոյն եւ առաւել, քան գտր առն եւ կնոջ»:* Այս իմանալով էր, որ Սողոմոնը Աստծո և եկեղեցու սերը միմյանց նկատմամբ այլաբանորեն ներկայացրեց հարսի ու փեսայի սիրո պատկերով: Հովհաննես Թլկուրանցին էլ համոզված է, թե սիրո պատճառով Ադամը վտարվեց

դրախտից, նույն պատճառով բանադրվում են հոգևորականները.

*Սիրուն չդիմանայ նախահայր Ադամ,
Վանց սիրոյ ելաւ յեղեմ դրախտէն համ:
...Սէրըն կու տանի զամոթն յերեսէն
Ի յաբեղայէն ւ'ի վարդապետէն
Երեց, սարկաւազ կու ձգե ի կարգէն,
Տանի զխելքն ի գըլխուն, զամօթն յերեսէն,
Շինէ մալամաթ, հանէ յարևէն,
Սիրով մի' սպանաներ, ծելլատ էֆենտի:*

A man is as old as he feels, and a woman as old as she looks.

Տղամարդն այն տարիքին է, ինչ ինքն է զգում, իսկ կինը՝ որքան երևում է:

Եթե տղամարդն իրեն զգում է առողջ և ուժեղ, նրա տեսքն ու տարիքը կարևոր չեն: Իսկ կնոջ համար առավել կարևոր է տեսքը. եթե նա ծեր կնոջ տեսք ունենա, ապա տղամարդկանց կերևա պարզապես որպես ծեր կին:

Man proposes, God disposes.

Մարդը ծրագրում է, Աստված տնօրինում:

Մարդն իր համար ծրագրեր է կազմում, սակայն Աստված է տնօրինում դրանց իրականացումը: Այստեղ Աստված նույնա-

Նու՛ն է Բախտի կամ ճակատագրի հետ, որոնց դիմաց մարդու ընդդիմանալն անօգուտ է:

Ռուսականը՝

„Человек предполагает, бог располагает“.

Ֆրանսիականը՝

”L’homme propose et Dieu dispose”.

A man without a smiling face must not open a shop.

Զժպտացող մարդը չպետք է խանութ բացի:

Այս բանաձևումը գալիս է չինական իմաստությունից. եթե խանութի տերը ժպտադեմ չի հրապուրում հաճախորդներին, ապա կկորցնի նրանց:

Many hands make light work.

Շատ ձեռքերը աշխատանքը թեթև են դարձնում:

Մեծ թվով մարդիկ, երբ սկսում են միասին որևէ առաջադրանք կատարել, օրինակ, դատարկել մեծ բեռնատարի պարունակությունը, աշխատանքն արագ է արվում և շուտ էլ ավարտվում է:

Marriage is lottery.

Ամուսնությունը վիճակախաղ է:

Ամեն ինչ կախված է բախտից, որն ինչ-որ չափով անհայտ է: Ոչ մեկը չի կարող ասել, թե կինն ու տղամարդն իրենց ինչպես կպահեն հետագայում, որովհետև ամուսնությունը կախված չէ

միայն մեկից, այլ երկու հոգուց, ու ապագան կարող է լինել և՛ ցանկալի, և՛ ոչ ցանկալի:

May God defend me from my friends, I can defend myself from my enemies.

Թող Աստված ինձ պաշտպանի ընկերներիցս, ես ինձ կպաշտպանեմ իմ թշնամիներից:

Սրանում կա այն ճշմարտությունը, թե ընկերները, բարեկամները երբեմն առավել վտանգավոր հարված են հասցնում, քան թշնամիները: Ավետիք Իսահակյանը «Աբու-Լալա Մահարի» հանճարեղ պոեմում այդ մասին գրում է.

*Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ, թե չլինեին
ընկեր, բարեկամ,
Որոնք համբույրով սիրտս բացեցին, որոնք
համբույրով խայթեցին նրան:
Բյուր կեղծիք ունի իր ակունքի մեջ համբույրը
մարդկանց, համբույրն ընկերի,
Որով որսում է գաղտնիքը սրտիդ և դարձնում է քեզ
հավիտյան գերի:
Ի՞նչ է ընկերը և բարեկամը՝ նենգ ու դրուժան,
չարական ու վատ:
Իմ հոգում մեռավ սիրո մի երկինք, մի վառ արեգակ,
և՛ սեր, և՛ հավատ:*

Չայկական առածանին ասում է.

«Ընկերը վերք է բացում»:

«Ընկերն ընկերոջ տունն է ավերում»:

«Վատ ընկերը վատ վերք է բացում»:

«Ընկերիդ խոսքին հավատա, էլի պինդ կաց քո բանին»:

Men make houses, women make homes.

Տղամարդիկ շենքեր են կառուցում, կանայք՝ տներ:

Տղամարդը գնում կամ կառուցում է շենքը, բայց այդ շենքն իրական տուն է դառնում, երբ կինն այն լցնում է ջերմությամբ, կարգ ու կանոնով և հարմարավետությամբ:

Հայկական առածանին ասում է.

«Կինը որ կա, տղամարդու կյանքն է»:

«Տղամարդը դրսի պատն է, կինը՝ ներսի»:

Men strain at gnats and swallow camels.

Մարդիկ քանում են մժուկներին և կլանում ուղտերին:

Առածը Մատթեոսի Ավետարանից է: Այն ուղղված է կեղծ բարեպաշտներին, ովքեր բարձրաձայն քննադատում են ուրիշների փոքր հանցանքները և նույն ժամանակ մոռանում իրենց մեծ հանցանքները: Մարդը չի կարող քամել մժուկին և կուլ տալ հսկա ուղտին, բայց դա ասվում է մարդու սարսափելի հանցագործ լինելը պատկերավոր ներկայացնելու համար: Մատթեոսի Ավետարանում կարդում ենք. *«Վայ ձեզ՝ դպիրներիդ և կեղծավոր փարիսեցիներիդ, որ տալիս եք անանուխի և սամիթի ու չամանի տասանորդը, բայց թողել եք օրենքի ամենից ծանրերը՝ արդարադատությունը, ողորմությունը և հա-*

վատը, հարկ էր այս անել և այն չթողնել: Կույր առաջնորդներ, որ մժուկները քամում եք և ուղտերը կուլ եք տալիս»:

Might is right.

Չզորն իրավացի է:

Սա կարևոր փաստարկ է ուժեղների համար: Վոլտերը գրել է. «Ասում են Աստված միշտ մեծ գորաբանակների կողմն է»: Այս բանաձևումը կիրառելի է Չայկական հարցում: Թուրքիայի անցյալ և ներկա կառավարությունները չեն ընդունում 1915-ի մեկ ու կես միլիոն հայերի ցեղասպանության փաստը՝ գտնելով, որ իրենք ուժեղ են, ուրեմն իրավացի են:

Իմաստախոսությունը գալիս է Եզոպոսի «Գայլն ու գառը» առակից, երբ գառանը հոշոտելու համար գայլը առաջադրում է մի շարք կեղծ փաստարկներ և, չընդունելով դրանց հակաճանություները, կտոր-կտոր է անում գառանը: Առակի բարոյախոսությունն է՝ *«Ուժեղի մոտ միշտ էլ թուլն է մեղավոր»:*

Misfortunes never come singly.

Դժբախտությունը երբեք մենակ չի գալիս:

Չաճախ մարդու մոտ մի դժբախտությանը հետևում է մեկ ուրիշը:

Չայկականը՝

«Անբախտ մարդը որ ուղտի վրա նստի, էլի շունը ոտքը կկծի»:

«Կարկուտը ծեծած տեղը կծեծի»:

Ռուսականը՝

„К мокрому теленку и мухи льнут“.

The more you have, the more you want.

Որքան շատ ունեք, այնքան շատ եք ցանկանում:

Մարդը երբեք չի բավարարվում իր ունեցածով: Երբ նա բավարարում է իր մի ցանկությունը, այն պարզապես նրա մոտ ծնում է նոր ցանկություն: Եվ այսպես շարունակ:

Necessity is the mother of invention.

Անհրաժեշտությունը գյուտի մայրն է:

Եթե մարդ որևէ բանի անհրաժեշտություն չունի, ապա դրա մասին չի էլ մտածում: Բայց երբ անհրաժեշտություն է լինում, ջանում է գտնել այն բավարարելու միջոցը և համգում է գյուտին: Դրա լավագույն ասպացույցն է, որ մարդը ձգտում էր առավել արագ կտրել տարածությունը և երկրագնդի մի ծայրից ավելի շուտ հասնել մյուս ծայրը ու ստեղծեց ինքնաթիռը:

Never judge by appearances.

Երբեք մի՛ դատիր տեսքից:

Երբեք կարծիք մի հայտնիր որևէ բանի մասին ըստ նրա տեսքի: Օրինակ, ձուն անհրաժեշտ է ջարդել՝ իմանալու համար թարմ է, թե՛ ոչ:

Never put off till tomorrow what may be done today.

Այսօրվա գործը վաղվան մի՛ թողնիր:

Ասացվածքը կա բոլոր ժողովուրդների բանավոր գրականության մեջ: Այն մարդու մեջ աշխատասիրությունն դաստիարակելու ամենաճիշտ խորհուրդն է, որը հավերժական ճշմարտություն է:

Հայկականը՝

«Էսօրվա բանը վաղվան չեն թողնի»:

Ռուսականը՝

„Что можешь сделать сегодня, не откладывая на завтра“.

Ֆրանսիականը՝

“Il ne faut pas remettre au lendemain ce qu'on peut faire le jour même”.

Never spend your money before you have it.

Փող չունեցած՝ այն մի՛ ծախսիր:

Այս ասացվածքը մարդկանց մեջ դաստիարակում է խոհեմություն: Մի՛ խոստացիր մարդկանց նվիրել թանկ իր, եթե դու դրա վճարը չունես, որովհետև հնարավոր է, որ այդ փողն այդպես էլ չունենաս և նվերին սպասողին հուսախաբ անես, տիաճություն պատճառես:

Never tell your enemy that your foot aches.

Երբեք մի ասա թշնամուդ, թե ոտքդ ցավում է:

Որևէ անձի մոտ երբեք մի խոսիր քո թուլության մասին, նա կարող է դա օգտագործել քեզնից առավել երևալու հարցում:

Never trouble trouble till trouble troubles you.

Մի՛ նեղվիր նեղության համար, մինչև նեղությունը քեզ չնեղի:

Չի կարելի մտահոգվել մի բանի համար, որը կարող է և չպատահել: Քո նեղվելը զուցե անհիմն է, և զուր ես նախապես տառապում: Այս իմաստախոսությունը շատ տարածված է անգլախոսների մոտ:

No answer is also an answer.

Պատասխան չկա, նույնպես պատասխան է:

Երբ մեկին հարց եք տալիս, ու նա չի պատասխանում, նրա լռությունը հենց պատասխան է:

No news is good news.

Չկա նորություն, լավ նորություն է:

Վատ լուրը շատ արագ է տեղ հասնում, իսկ լավ լուրը չեն տարածում, դրա համար էլ, երբ որևէ մեկի ուշանալու համար հարազատներն անհանգստանում են, նրանց հանգստացնում են՝ ասելով, թե վատ բան լինելու դեպքում արդեն լուրը հասած կլիներ, եթե լուր չկա, ուրեմն վատ բան չի պատահել:

Nothing is given so freely as advice.

Ոչինչ այնքան ձրի չի տրվում, որքան խորհուրդը:

Շատերն այնքան էլ սիրով չեն ընդունում ուրիշների տված խորհուրդը, սակայն բոլորն էլ պատրաստ են խորհուրդ տալ:

Of two evils choose the lesser.

Երկու չարիքներից ընտրել փոքրագույնը:

Ասույթը գալիս է հույն փիլիսոփա Սոկրատեսից, որի կարծիքով, երբ առաջարկում են երկու չարիք, ապա ոչ ոք մեծը չի վերցնի, այլ փոքրագույնը:

One lie makes many.

Մի սուտը ծնում է շատ ստեր:

Երբ մարդ մի սուտ է ասում, այն ծածկելու համար երբեմն սկսում է նոր ստեր հորինել և դառնում է ստախոս:

One is never too old to learn.

Մեծի համար երբեք ուշ չէ սովորելը:

Տարիքի առաջանալու հետ չպետք է մոռանալ շարունակական գիտելիքներ ձեռք բերելու մասին: Կիկերոնը համոզված էր, թե սովորելու տենչը մարդուն ուղեկցում է նրա բոլոր տարիքներում, իսկ իտալական Վերածննդի համճարեղ քանդակագործ և նկարիչ Միքելանջելոն ասում էր, թե ինքը շարունակ սովորում է:

One swallow does not make a summer.

Մի ծիծեռնակ գարուն չի բերի:

Նշանակում է՝ մարդը միայնակ ի վիճակի չէ որևէ մեծ գործ գլուխ բերել, նրան օգնողներ են պետք: Այս առաժը կա շատ ժողովուրդների մոտ:

Հայկականը՝

«Մի ծաղկով գարուն չի լինի»:

«Մի փունջ ծաղկով մայիս չի գա»:

«Մի ձեռքը ծափ չի տա»:

«Մի կկվով գարուն չի գա»:

«Մենակությունը Աստծուն է վայել»:

Ռուսականը՝

„Одна ласточка весны не гоняет“.

Ֆրանսիականը՝

„Une hirondelle ne fait pas le printemps“.

Սուրացանը «Գևորգ Մարզպետունի» վեպում ունի «Մի ծաղկով գարուն» գլուխը, որով, ի հակադրություն ժողովրդական իմաստության, ներկայացնում է Գևորգ Մարզպետունու՝ եզակի անհատի հզոր ուժը: Ռուսական ֆիլմ կա նույն իմաստով, կոչվում է՝ „И один в поле воин“.

Other times, other manners.

Ուրիշ ժամանակներ, ուրիշ բարքեր:

Ամեն սերունդ ունի իր վարքագիծը, որը բավականին տարբեր է նախորդից: Դա անցած սերնդի համար կարող է առաջացնել և՛ շփոթմունք, և՛ վրդովմունք:

Out of sigt, out of mind.

Աչքից հեռու, մտքից հեռու:

Բացակա ընկերը շատ շուտ մոռացվում է:

The pen is mightier the sword.

Խոսքն ավելի հզոր է, քան սուրը:

Խոսքի ուժը գիտակցվել է վաղնջական ժամանակներից: Դա հիանալի երևում է տարբեր կրոնների սրբազան մատյաններում: Ջրադաշտական կրոնի սրբազան մատյանում՝ Ավեստայում, մեծ տեղ են զբաղեցնում անեծքներն ու օրհնանքները, որոնք մարմնավորում են հավատը խոսքի ուժի նկատմամբ: Հայկական առածանին այդ մասին ասում է՝

«Սրի կտրածը կլավանա, լեզվինը՝ չի լավանա»:

«Գեշ լեզուն ածելուց սուր է»:

«Չար լեզուն աշխարհ է քանդում»:

«Կացնի կտրածը կլավանա, լեզվինը՝ ոչ»:

«Արճիճի վերքը կլավանա, լեզվի վերքը չի լավանա»:

«Ոտքով ընկնողը կբարձրանա, լեզվով ընկնողը չի բարձրանա»:

«Լեզվի ծակածը դանակն էլ չի ծակի»:

«Մինչև թուրը եկավ, լեզուն գլուխը կտրեց»:

«Լեզվի ծակածին դեղ չկա»:

«Անասունը կապում են պարանով, մարդուն լեզվով»:

«Թուրը մի մարդ սպանեց, լեզուն մի բանակ»:

«Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է»:

Ռուսականը՝

„Не ножа бойся, а языка“.

„Злые языки страшнее пистолета“.

Ֆրանսիականը`

''Un coup de langue est pire qu'un coup de lance''.

Pleasant hours fly fast.

Չաճելի ժամերն արագ են թռչում:

Երբ վայելքի մեջ ենք, ժամանակն արագ թռչում է, իսկ երբ ցավի, տանջանքի կամ սպասման մեջ ենք, թվում է` ժամանակը չի շարժվում, ժամերն օրեր են թվում:

Poverty is no sin.

Աղքատությունը հանցանք չի:

Չանցանք չի աղքատ լինելը:

Ասացվածքը զգուշացնում է մարդկանց անարգանքով չնայել աղքատներին:

Practice makes perfect.

Վարժվածությունն է ստեղծում կատարելություն:

Նույն գործը բազում անգամ կատարելով է միայն հնարավոր հասնել կատարելության: Բոլոր մեծ նկարիչները, քանդակագործները, գիտնականները հասնում են ակնառու հաջողությունների, եթե երկար վարժվել են իրենց բնագավառում:

A prophet is not without honour, save in his own country, and in his own house.

Մարգարեն պատիվ չունի ոչ իր գավառում, ոչ իր տանը:

Մարդու կարողությունները հազվադեպ են ըստ արժանվույն գնահատվում իր ընտանիքի անդամների և նրան շրջապատող մարդկանց կողմից: Այս ասույթի աղբյուրը Մատթեոսի Ավետարանի հետևյալ հատվածն է. *«Երբ Հիսուս այս առակները վերջացրեց, այնտեղից տեղափոխվեց: Եվ գալով իր գավառը՝ նրանց ուսուցանում էր իրենց ժողովարանում, այնպես որ նրանք զարմանում ու ասում էին. «Սրան որտեղի՞ց են այս հմաստությունը և զորության գործերը: Սա հյուսնի որդի չէ՞. սրա մայրը չէ՞, որ Մարիամ է կոչվում և սրա եղբայրները՝ Հակոբոս, Հովսես, Սիմոն և Հուդա: Եվ սրա քույրերը բոլորը մեզ մոտ չեն. արդ, որտեղի՞ց է սրան այս բոլորը»:* Եվ նրա վրա գայթակղվում էին: Իսկ Հիսուս նրանց ասաց. *«Չկա անարգված մարգարե, բայց միայն իր գավառում և իր տանը»:* Եվ նրանց անհավատության պատճառով այնտեղ զորավոր շատ գործեր չարեց»:

A rich man's joke is always funny.

Հարուստ մարդու կատակը միշտ զվարճալի է:

Առածի մեջ դարավոր ճշմարտություն կա: Հարուստի կատակը կարող է զվարճալի չլինել, սակայն մարդիկ նրան դուր գալու համար ծիծաղում են: Աղքատ մարդը կարող է շատ ավելի հաճելի կատակ անել, սակայն նրան ոչ լսող կա և ոչ էլ ծիծաղող: Այս միտքն արտահայտել է XV դարի բանաստեղծ

Սկրտիչ Նաղաշը իր տաղերից մեկում, ուր ներկայացնում է պանդուխտ մարդու ծանր վիճակը օտարության մեջ.

*Եւ թէ լինի քան զՍողոմոն մտօք ճարտար,
Որ թէ խօսի բան մի քանի անգին ճոհար,
Սաստեն նմա, թէ՛ Լուռ կացիր, անգէտ, յիմար:*

Rome was not built in a day.

Յռոմը մի օրում չի կառուցվել:

Այս առաժը սովորեցնում է համբերատար լինել: Բոլոր մեծ ձեռնարկները ժամանակ են պահանջում: Ով եղել է Յռոմում, կարող է վկայել այդ քաղաքի եզակիությունը՝ տարբեր դարերի շինությունները կողք կողքի տեսնելով՝ անտիկ շրջան, միջնադար, Վերածնունդ, նոր ժամանակներ:

So many countries, so many customs.

Որքան շատ երկրներ, այնքան շատ սովորություններ:

Ամեն ազգ դարերի ընթացքում ստեղծել է իր կենսակերպը, որը տարբեր է ուրիշ ժողովուրդների ունեցածից:

A soft answer turneth away wrath.

Մեղմ պատասխանն իջեցնում է ցասումը:

Ասացվածքը գալիս է Սողոմոն Իմաստունի «Առակաց» գրքից. *«Մեղմ պատասխանը սրտմտությունն իջեցնում է, իսկ խիստ խոսքը բարկություն է գրգռում»*: Ասացվածքը սովորեցնում է. եթե մեկը բղավում է ձեր վրա, դուք մի գոռացեք: Եթե դուք նրան պատասխանեք մեղմ և քաղաքավարի, առավել շահեկան վիճակում կլինեք:

Strike while the iron is hot.

Ծեծիր, քանի երկաթը տաք է:

Առածն ունի և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստ: Երբ երկաթը կարմրած է ջերմությունից, այն հեշտությամբ կարող է ստանալ ցանկացած ձևը, իսկ սառը վիճակում այդ անել անհնար է: Փոխաբերական իմաստն էլ այն է, որ մարդ պետք է ընտրի ճիշտ պահը որևէ գործ կատարելու համար, եթե պահը կորչում է, անհնար է դառնում այն իրականացնել:

Հայկականը՝

«Երկաթը տաք-տաք կծեծեն»:

«Թոնիրը տաք ժամանակ հացը կողիմ կտան»:

Ռուսականը՝

„Куй железо, пока горячо“.

„Коси коса, пока роса“.

Ֆրանսիականը՝

“Il faut battre le fer quand il est chaud”.

The tailor makes the man.

Դերձակն է մարդուն տեսք տալիս:

Գեղեցիկ զգեստը մարդուն կարող է այնպիսի տեսք տալ, որ նա հասարակության մեջ դրանով աչքի ընկնի:

Մովսես Խորենացին Տիգրան Երվանդյանի՝ Հայաստանի համար ստեղծած բարեկեցության նկարագրի մեջ խոսել է նաև զգեստի՝ մարդուն գեղեցկացնելու մասին. «...մթերքներ ոսկու և արծաթի, և պատվական քարերի և զգեստների և զանազան գույների և գործվածքների՝ տղամարդկանց և կանանց համար՝ առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեմատ դյուցազունների էին նմանվում»:

Խ. Աբովյանը «Հացակեր փեշը» առակում ներկայացնում է զգեստի ուժը. մարդիկ ոչ թե նայում են հյուրի խելքին, այլ նրա զգեստին ու պատիվը տալիս են զգեստի շքեղությանը.

*Հանկարծ մեկի աչքն ընկավ նրրա վրա.
Տեսավ որ փեշն է ձեռքն բռնել նա,
Անանի պռնկին դրնում ու ասում.
«Փեշ, հաց կե՛ր, քեֆով, ի՞նչ ես վախենում,
Քեզ են էս պատիվն տալիս էս մարդիք,
Ինձ հո չեն սիրում էս շատ պատվելիք:
Կե՛ր ու գլուխդ ա՛ր, փախչի՛նք սրանցից»:
...Սարդին մարդ շինողն որ շորն է էլած,
Գնա՛նք մեր սարը, անիծվի էս հացն:*

Հայկական առածանի՝

«Շոր տուր՝ շնորհքի գամ, հաց տուր՝ խելքի գամ»:

«Շորն ասաց. «Դու ինձ պահիր կապոցի մեջ, ես քեզ պահեմ մարդամիջին»:

«Մարդուն մարդ դարձնողը շորն է»:

«Շորը շնորհքի համար է»:

«Մարդու կարողությունը հագուստով կինացվի»:

Talk of the devil and he is sure to appear.

Տուր սատանայի անունը, և նա անկասկած կհայտնվի:

Խոսքի իրական դառնալն է: Երբեմն մարդը խոսում է ինչ-որ մեկի մասին, և նա հանկարծ հայտնվում է: Նույն առածն է, ինչ`

Հայկականը`

«Շան անունը տուր և փայտը ձեռքդ վերցրու»:

«Հյուրի անունը տուր և սփռոցը գցիր»:

«Անունը տուր` խալին փռիր»:

Ռուսականը`

„Про волка речь, а он навстречь“.

Ֆրանսիականը`

”Quand on parle du loup, on en voit la queue”.

There is honour among thieves.

Գողերն իրար պատիվ են պահում:

Գողը չի ամաչում ազնիվ մարդուն կողոպտելուց, բայց չի կողոպտում իր նման գողին: Նույն առածն է, ինչ` «Շունը շան միս չի ուտի», «Առյուծն առյուծի միս չի ուտի»: Կա նաև` «Գողը գողից գողացավ, Աստված տեսավ, զարմացավ»:

There is nothing new under the sun.

Արևի տակ ոչինչ նոր բան չկա:

Շատ հին ասույթ է և գալիս է Հին կտակարանի «Ժողովողի» գրքից.

Ինչ որ եղել է, նույնը պիտի լինի

Ու ինչ կատարվել է, նույնը պիտի կատարվի:

Արևի տակ բնավ նոր բան չկա:

Կա արդյոք այնպիսի մի բան,

Որի համար ասվի.

«Ահա սա նոր է»:

Խոսքը, անշուշտ, մարդկային փոխհարաբերությունների մասին է՝ սիրո, նվիրվածության, անձնագոհության, դավաճանության, ստախոսության, գողության, վրեժխնդրության, ստորության, ներողամտության, բարեխղճության, ծուլության, աշխատասիրության, գթասրտության, դաժանության, ազահության, առատաձեռնության և մարդկային նման հատկանիշների, որոնք նույնն են՝ սկսած վաղնջական ժամանակներից մինչ մեր օրերը և կշարունակվեն, քանի դեռ երկրագնդի վրա կապրեն մարդ արարածները:

Time is money.

Ժամանակը փող է:

Ժամանակն արժեքավոր է, ինչպես փողը: Շատ ժամանակը նույնքան թանկ է, որքան շատ փողը: Չի կարելի երբեք անտեղի շռայլել ժամանակը, ինչպես չի կարելի շռայլել փողը:

Times change.

Ժամանակը փոխվում է:

Այն, ինչ արժեքավոր էր անցյալում, կարևոր ու անհրաժեշտ չէ այսօր: Եթե առաջ հողը վարում էին գութանով, ապա մեր օրերում դա այլևս արժեք չունի, որովհետև կան նոր ու կատարյալ տեխնոլոգիաներ:

Tomorrow is another day.

Վաղն ուրիշ օր է:

Երբեք չի կարելի մտածել, որ ամեն ինչ ավարտվեց այսօր, և դա վերջին օրն է. վաղը գալու է մեկ ուրիշ օր և գուցե այն, ինչ չկարողացաք այսօր անել կամ հասնել որևէ բանի, կանեք վաղը: Պետք չէ կորցնել հույսը:

Too many cooks spoil the broth.

Չափից ավելի խոհարարները փչացնում են արգանակը:

Խոհանոցում ճաշով պետք է մեկը զբաղվի: Եթե շատերն են միասին ճաշը եփում, նրանց մեջ անհամաձայնություն կծագի, թե որքան աղ գցեն, որքան բիբար, և գուցե փչացնեն ողջ ուտելիքը: Եթե շատ մարդիկ միասին ուզում են միևնույն գործը կատարել, քաոս է առաջանում:

A tree is known by its fruit.

Ծառը պտղից են ճանաչում:

Մարդու մասին դատում են ըստ նրա գործերի: Աղբյուրը
Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններն են:

ՄԱՏԹԵՈՍ

*«Կան՝ ծառը բարի դարձրե՞ք և նրա պտուղն էլ՝ բարի, կան
ծառը չար դարձրե՞ք և նրա պտուղն էլ՝ չար. քանի որ իր պտղից
է ծառը ճանաչվում: Իժերի՛ ծնունդներ, դուք, որ չար եք,
ինչպե՞ս կկարողանաք բարի բաներ խոսել, քանի որ բերանը
սրտի լիությունից է, որ խոսում է: Բարի մարդը իր սրտի
զանձերից հանում է բարի բաներ, իսկ չար մարդը իր սրտի չար
զանձերից հանում է չար բաներ»:*

ՂՈՒԿԱՍ

*«Որովհետև չկա բարի ծառ, որ չար պտուղ տա, և
դարձյալ՝ չկա չար ծառ, որ բարի պտուղ տա, որովհետև
յուրաքանչյուր ծառ իր պտղից է ճանաչվում:*

*Փշերից թուզ չեն քաղում և ոչ էլ մորենուց՝ խաղող: Բարի
մարդը իր սրտի բարի զանձերից բարին է բխեցնում, իսկ չար
մարդը չարից՝ չարն է բխեցնում, որովհետև սրտի ավելցուկից
է, որ խոսում է նրա բերանը»:*

Ասացվածքն առկա է շատ ազգերի մոտ:

Քայլականը՝

«Ծառն իր պտղից կճանաչվի»:

«Ծառը պտղով ճանաչիր, մարդը՝ գործով»:

Ռուսականը`

„Дерево смотри в плодах, а человека — в делах“.

„Дерево от плодов, а человек от дел познается“.

Ֆրանսիականը`

”On reconnaît l’arbre à ses fruits”.

”Tel arbre, tel fruit”.

”Tel grain, tel pain”.

”Tel père, tel fils”.

Two dogs fight for a bone, and a third runs away with it.

Երկու շուն կռվում են ոսկորի համար, երրորդն այն առած փախչում է:

Երբ երկու անձ կռվում են ինչ-որ բանի համար, երրորդը ստանում է առավելություն, որովհետև դուրս է մնում նրանց ուշադրությունից և կարող է հայտնվել շահեկան դիրքում ու իրեն վերցնել կռվի առարկան կամ պաշտոնը:

Հայկականը`

«Երկու շուն կռվեցին, ծամփորդի բախտը բերեց»:

Two heads are better than one.

Մի խելքը լավ է, երկուսն` առավել:

Լավ է խորհրդակցել որևէ խելացի մարդու հետ, մինչև վերջնական որոշում կայացնելը: Սա նույնպես շատ տարածված բանաձևում է:

Ռուսականը`

„Ум хорошо, а два лучше“.

„Одна голова хорошо, а два лучше“.

Ֆրանսիականը`

„Deux avis valent mieux qu'un“.

Two is company, three is none.

Երկուսը ընկերություն է, երրորդը` ոչ:

Ասվում է նաև` *«Երկուսն ընկեր են, երրորդը` ամբոխ»:* Երկու ընկեր ավելի հեշտությամբ են համաձայնության գալիս իրենց կարծիքների մեջ, սակայն երրորդի ներկայությունը կարող է հանգեցնել անհամաձայնության ու վեճի:

Հայկականը`

«Երրորդն ավելորդ է»:

Ռուսականը`

„Третий лишний“.

United we stand, divided we fall.

Միասին կանգուն ենք, բաժանված` ընկած:

Միությունը ուժ է: Երբ մարդիկ միասին են, ապահով են, իսկ բաժանված` դառնում են խոցելի: Այս հին իմաստությունը V դարում հայ ազգին քարոզում էր Եղիշեն իր ոսկեղենիկ «Վարդանանց պատմության» մեջ. *«Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը` չար գործերի ծնողը»:*

Հայկական առածանի`

«Միությունը զորություն է»:

«Գյուղը որ կանգնի, գերանը կկոտրի»:

«Մեջք մեջքի որ տանք, սարեր շուռ կտանք»:

«Մի ձեռքը ծափ չի տա»:

«Ձեռքը ձեռք կլվանա, երկու ձեռքը երես»:

«Երկու կատու խեղդում են մի շուն»:

Ռուսականը՝

„В единении сила“.

Ֆրանսիականը՝

”L’union fait la force”.

The voice of the people is the voice of God.

Չայն ժողովրդի, ձայն Աստուծո:

Այս իմաստախոսությունը ծագել է լատիներեն ”Vox populi vox Dei” բանաձևից: Կա բացատրություն, թե սա չի նշանակում բազում մարդկանց ձայնը իմաստուն է կամ վատ, բայց միայն այն անհաղթահարելի է, ինչպես ամենակարող է Աստված:

Wake not a sleeping lion.

Մի՛ արթնացրեք քնած առյուծին:

Նշանակում է՝ չպետք է տառապանքի գնալ: Ավելի ապահով է իրերը թողնել այնպես, ինչպես կա, այլապես կարող է ողջ իրականությունը ավելի վատը դառնալ:

Walls have ears.

Պատերն ականջ ունեն:

Պետք է շատ ուշադիր լինել, թե ինչ և որտեղ ես խոսում: Գուցե ինչ-որ մեկը պատի հետևից քեզ լսում է, գուցե քո

սենյակում միկրոֆոն է դրված, որը դու չես տեսնում, և քո խոսքը լսում են: Ձգուշացում է ծայրահեղ ուշադիր ու հավաք լինելուն, ավելորդ ոչինչ ուրիշների մոտ չասելու:

The way to a man's heart is through his stomach.

Ճանապարհը դեպի տղամարդու սիրտն անցնում է նրա ստամոքսով:

Մշտական խորհուրդ է բոլոր այն կանանց, ովքեր ամուսին ունեն: Ամուսնուն հարկավոր է սիրով ու լավ կերակրել, և նա միշտ կսիրի իր կնոջը:

Well begun is half done.

Լավ սկիզբը գործի կեսն է:

Երբ որևէ գործ սկսում եք անտարբեր ու անփույթ, այն թվում է դժվար բեռ, և ձեր գործը երկարում է: Բայց եթե սկսում եք ոգևորված ու եռանդով, ամեն ինչ դառնում է հեշտ ու կատարվում է արագ: Ուրեմն՝ գործը պետք է սկսել հիմնովին ու հետևողական, և արդյունքը կլինի արագ ու ցանկալի:

We are all slaves of opinion.

Մենք բոլորս կարծիքի ստրուկներն ենք:

Այստեղ կարծիքը հասարակական իմաստով է: Մեր ամեն քայլն անելիս շարունակ մտածում ենք, թե ուրիշներն ինչ կմտածեն ու կասեն դրա մասին:

Հասարակական կարծիքն ըստ հայկական «Առածանու».

«Բերնեբերան, հազար բերան»:

«Բերնեբերան՝ կլինի սյուն ու գերան»:

«Բերնեբերան՝ ասեղը գերան»:

«Ամեն բերան տոպրակ չի, որ կարես»:

«Արագ եմ գնում՝ գիժ եմ ասում, դանդաղ եմ գնում, ասում են էշ է»:

«Մարդու աչքը դուրս գա ավելի լավ է, քան՝ անունը»:

When in Rome do as the Romans do.

Եթե Յոռնում ես, արա հռոմեացիների պես:

Երբ քո հայրենիքում չես, ապա պետք է հարմարվես նոր երկրի կարգ ու կանոնին: Երբեք մի երկրի վարքն ու բարքը նման չեն մեկ այլ երկրի նիստուկացին: Մարդ պարտավոր է ենթարկվել տվյալ երկրի օրենքներին ու պահանջներին: Այս առիթով դիպուկ նկատում ունի Ստեփանոս Նազարյանը «Մատենագրական ծանուցումն» հոդվածում. «...մարդս ամենայն տեղ հետևանք է յուր շրջապատող ազդեցությունների, և հայը մի կաթիլ ջուր է օտարության օվկիանոսի մեջ»:

When one door shuts another opens.

Երբ մի դուռը փակվում է, ուրիշն է բացվում:

Մարդուն հուսադրող ասույթ է: Երբ ձախողվում է որևէ գործ, չպետք է հուսահատվել, որովհետև կլինի նաև բարեպատեհություն, ու ամեն ինչ կլուծվի:

When the cat is away the mice will play.

Երբ կատուն չկա, մկները կխաղան:

Շատ հին առած է և առկա է տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ: Միտքն այն է, որ երբ հեղինակություն ունեցող հսկող մարդը բացակայում է, իրենցից ոչինչ չներկայացնող մարդիկ ձևանում են հեղինակավոր: Այս երևույթի մասին երգիծական հիանալի ոտանավոր ունի Նաղաշ Հովնաթանը՝ «Տաղ ի վերայ սուտ մեռեալ կատուին, զոր մկներն տանին թաղեն, ի Նաղաշ Յովնաթանէ ասացեալ» խորագրով.

*Կատուն մեռաւ, ափսո՛ս ու վա՛խ,
Մկներն այսօր խիստ են ուրախ,
Թէ որ յանկարծ վեր կենայ սաղ,
Մկներն կանէ արիւնշաղախ:*

When the word is out it belongs to another.

Երբ խոսքն ասում են, այն արդեն ուրիշինն է:

Եթե խոսքն արդեն արտաբերվել է, այն հետդարձ չունի: Դրա համար էլ արտաբերելուց առաջ պիտի մտածել ու նոր խոսել:

A wise man is never less alone than when alone.

Իմաստուն մարդը երբեք մենակ չի լինում, երբ մենակ է:

Իմաստուն մարդը կգտնի զբաղմունք և մտածմունք, որոնք նրան մենակ չեն թողնի:

Wise men learn by other men's mistakes, fools by their own.

Իմաստուն մարդիկ սովորում են ուրիշ մարդկանց սխալներից, հիմարները՝ սեփականից:

Իմաստուն մարդիկ քիչ են սխալվում, որովհետև նրանք տեսնում են ուրիշների սխալները և փորձում են նույնը չանել, իսկ հիմարները միայն իրենց սխալներն են տեսնում:

You cannot make an omelet without breaking eggs.

Չեք կարող ձվածեղ անել առանց ձվեր ջարդելու:

Ոչինչ չանելով՝ չեք կարող որևէ բան ձեռք բերել: Պետք է պատրաստ լինեք ինչ-որ բան զոհաբերել, որ արդյունք ունենաք:

You may lead a horse to the water, but you cannot make him drink.

Դուք կարող եք ձիուն տանել ջուր խմելու, սակայն չեք կարող ստիպել, որ խմի:

Այս միտքն արտահայտել է ամերիկյան գրող Դորոտի Պարկերը (1893-1967). „Можно привести лошадь к водопое, но нельзя заставить ее пить. Можно привести куру к культуре, но нельзя заставить ее думать“.

Սա նշանակում է, թե կարող եք որևէ մարդու ասել ձեր տեսակետը, բայց նա կարող է լսել ու չընդունել այն: Ասույթը նաև անձնիշխանության մասին է: Այս առումով հետաքրքիր է

Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցուն» մարդու անձնիշխանության մասին ասվածը. «Բայց մարդը, ազատականություն ստանալով, ծառայում է, ում որ կամենում է: ...Սակայն աստված կամեցավ մարդուն պատվել այս ձևով. լավ բաների մեջ խորամուխ լինելու համար ազատականություն պարզևեց նրան, որով կարողանա անել, ինչ որ ցանկանա և հորդորեց՝ ազատականությունը լավ բաների համար ծառայեցնել»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Հայերեն

ԱԲՈՎՅԱՆ Խ., Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1939

ԱԲՈՎՅԱՆ Խ., Երկերի ժողովածու ութ հատորով, հ. 2, Երևան, 1948

ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ, Ադամգիրք, Աշխատասիրությամբ Ա. Մադոյանի, Երևան, 1989

ԱՍՏՈՒԹԱՇՈՒՆՉ ԳԻՐՔ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ, Եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած, Պեյրութ, առանց թվականի

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻ, Պատմություն, Թարգմանությունը Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ա., Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, Եղծ աղանդոց, Աղանդների հերքումը, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970

ԵՂԻՇԵ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1980

ԷՄԻՆԵԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ, հ. 2, ժողովրդական երգ, առած, ասած, հանելուկ, երդում, օրհնանք, անեծք և այլն, հավաքեց Ս. Հայկունի, Մոսկվա-Վաղարշապատ, 1906

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 2, Երևան, 1990

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՅՈՒՐ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 6, Երևան, 1994

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՅՈՒՐ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 8, Երևան, 1995

ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎ., Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. II, Երևան, 1974

ՅՈՒՐԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ, Տաղեր, Աշխատասիրությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, Հայոց պատմություն, Թուրք Վահան Մամիկոնյանին, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բ.Ուլուբաբյանի, Երևան, 1982

ՂԱՆԱԼԱՆՅԱՆ Ա., Հայկական առածանի, Երևան, 1951

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ, ԺԲ հատոր, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Երևան, 2011

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇ, Աշխատասիրությամբ Էդ. Խոնդկարյանի, Երևան, 1965

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏ., Երկերի ժողովածու, Երևան, 1996

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Մ., Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 4, Երևան, 1983

ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ, Տաղեր, Երևան, 1983

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 1975

ԶԱՐԵՆՑ ԵՂ., Հատընտիր, Երևան, 1987

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղեր (Լիակատար ժողովածու), Աշխատասիրությամբ Հենրիկ Բախչինյանի, Երևան, 2007

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Երևան, 1963

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ, Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961

ՍԵԲԵՆՍ, Պատմութիւն, Աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979

ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978

ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ Գ., Երկեր, հ. 2, Երևան, 1982

ՓԻԼԻՍՈՓՈՒՅԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ, Երևան, 1975

ՖՐԻՎ, Տաղեր, Երևան, 1982

բ) Ռուսերեն

АШУКИН Н. С., АШУКИНА М. Г., Крылатые слова, Москва, 1987

КРАВЦОВ Н. С., ЛАЗУТИН С. Г., Русское устное народное творчество, Москва, 1983

МЫСЛИ, АФОРИЗМЫ И ШУТКИ ВЫДАЮЩИХСЯ ЖЕНЩИН, Отыскал, перевел и привел в систему Константин Душенко при участии Галины Манчха, Москва, 2004

ОРБЕЛИ И.А., Избранные труды в двух томах, т. II, Ереван, 2002

գ) Անգլերեն, ֆրանսերեն

AESOP'S FABLES, London, 1992

COLLINS GEM DICTIONARY OF BIOGRAPHY, Edited by
James Mallory, B.A., London and Glasgow, 1976

EBERSPAECHER ALEX, VINO VERITAS, Oakville, Canada, 1938

PETIT ROBERT – 2, Paris, 1988

PROVERBES ET DICTONS FRANÇAIS avec leurs traduction et
équivalents russes et arméniens par Armand Nazarian,
Erevan, 1994

RONALD RIDOUT AND CLIFFORD WITTING, English Proverbs
Explained, London, 1981

WORDS OF WISDOM, New York, 1997

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ -----	5
FOREWORD -----	7
ՆԱԽԱԲԱՆ -----	9
ԻՄԱՍՏԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----	22
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ -----	